



Rédaction et Administration :
7, Rue Papère — MARSEILLE

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԺԲ. Տարի - ՅՈՒԼԻՍ 1936 12^{me} Année - Juillet 1936

Խմբագրական

Սուրբ Հոգիին միաբանութիւնը

Յ. Ն. Ղ.

Հոգ. կեանք

Աստուծոյ զաւակը եւ մեղքի խնդիրը

Վեր. Ա. Ղ. Եղոյեան

Ասիայի եօթը եկեղեցիները

Վեր. Ա. Օ. Փափաղեան

Աղօթքս

Սամուէլ Պ.

Կենաց ամուսնութիւն

Վերածնունդ. Հոգիին եւ մարմնի

Վեր. Վ. Գ. Մուճեան

Փրկչին հրաւերը

Մէյմարտիս

Անհաւատի մը ապաշխարութիւնը

Սերոտողութիւն

Կիրակնօրեայ դասերու ներշնչումներ

Վ. Ս.

Ընտանեկան

Քրիստոնեային վկայութիւնը ընտանիքին մէջ

Թարգ. Ի. Յ. Աբրահամեան

Պատանեաց

Մէյրի Ճօնս եւ իր Ս. Գրքերը

Լ. Ս.

Յիսուս Քեզի պատի հետեւիմ



ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաթերթը թէիս ֆրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու պաշտօնականներէն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք Տշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարար կըզգան Աստուծոյ խօսքին անխաղախ
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, ուստի Տշմարտութիւն
ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւ է յարանուանութիւն մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաթերթը երկու լեզուներով կը հրատարակուի Հայերէն եւ Թուրքերէն: Երկուքն ալ
կը տպուին Մարտի 1-ի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողքէն ռուս), որուն խմբագրական մարմինն է,
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Բրօֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատր. Ս. ՊԱԳԳԱԼԵԱՆ, Վ. ՍԱՀԱԿԵԱՆ
Թուրքերէնը ունի 8 էջ ո'չ թէ հայերէնին Թարգմանութիւնը այլ տարբեր բովանդակութեամբ: Այս պարագան
գիւրդութիւն կուտայ որ Թուրքերէն գիտցող մը անկէ ալ կընայ սգոտիլ: Թուրքերէն մասի պատասխա-
նատու խմբագիրն է՝

ԺՕԶԷՅ 4. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որու ղրկուելու են նստել րոպէ Թուրքերէն յօդուածները:

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Քրիստոսով:

XXXXXXXXXXXX

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրուած իւնը տարեկան է կանխիկ

— ԲԱՃՆԵԳԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա 20 Սուրիա 15 Ֆրանք
Արտասահման 20 Ֆրանք

ԹՈՒՐԿԵՐԷՆԸ Ֆրանսա 10 Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 10 Ֆրանք

ՀԱՅԵՐԷՆ եւ ԹՈՒՐԿԵՐԷՆ միասին Ֆրանսա 25
Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման 25 Ֆրանք

Թղթակցութիւններ եւ յօդուածներ ղրկուելու են
Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ իսկ ղրամական առա-
քումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անուէնով, եր-
կուքն ալ հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN

7, Rue Papère


MARSEILLE (France)

Ֆրանսայի դրամական առաքումներու համար մեր Compte Chèque Postalն է H. N. Ghazarossian, 182, 53 Marseille

Արեւիկի՛ր դուն
ար կը քնանաս, եւ
կանգնէ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:

Եփես. Ե 14

ԲԱՆԲԵՐ



Ուրեմն ա՛լ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր հանգիստը մոռնելու խոստմունքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Դ. 1

Քանզի: ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:

Երբ. Ժ. 37

ԺԲ. ՏԱՐԻ

ՅՈՒԼԻՍ 1936

ԹԻԻ 7



ՍՈՒՐԲ ՀՈԳԻՒՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Ջանալով Հոգւոյն Միաբանութիւնը խաղաղութեան կապովը պահել:

Եփես. Դ. 3

«Բաների տնցեալ թիւին մէջ քանի մը տո-
ղերով ներկայացուցինք Քրիստոսի մտքին հա-
մաձայն եղած եկեղեցին, ցոյց տալով համառո-
տակի անոր տոկունութեան ու զօրութեան դե-
րագանցութիւնը, անոր առանձնաշնորհը (դրժը)
ու անոր վկայութեան զօրութեան զաղտնիքը:

Այսօր ջանքերնիս պիտի ըլլայ ձեր ուշադրու-
թեան եւ ուսումնասիրութեան յանձնել եկեղե-
ցին միաբանութիւնը լուսաբանուած Եփես. Դ.
Յրդ համարով: Առաքեալը կ'ըսէ, ջանալով Հոգ-
ւոյն Միաբանութիւնը խաղաղութեան կա-
պովը պահել:

Այս կարճ նախադասութեան մէջ կը տեսնենք
թէ միաբանութիւն մը կայ, ոչ թէ նոր պիտի
ստեղծուի: Եկեղեցի միաբանութիւն ըսել է: Ջա-
նիկա ստեղծողը եւ ղեկավարողը Ս. Հոգին է: Ա-
նիկա բոլոր դասակարգերէն, տարիքներէ, ազգե-
րէ, ցեղերէ ու լեզուներէ բաժնուած անձերը՝ ի
մի հաւաքած՝ է որպէս Քրիստոսի մարմինը եւ կը
կառավարէ զայն: Ս. Հոգին բուն իսկ միջավայրն
է այդ միաբանութեան:

Կը տեսնենք նաեւ թէ այդ միաբանութիւնը
անհրաժեշտ է: Եկեղեցիին առաջին յատկանիշ-
ներէն մին է միաբանութիւն, որով կարելի չէ
մտածել եկեղեցիի մը գոյութեան մասին՝ առանց
միաբանութեան: Եւ ուստի ուր միաբանութիւն
չկայ, կազմակերպութիւն մը թէպէտ գոյութիւն
ալ ունենայ, բայց եկեղեցի չկայ: Եկեղեցին երբ
իւր միաբանութիւնը կորսնցնէ, Ս. Հոգին գեր-
իշխանութիւնը կը կորսնցնէ եւ կ'իյնայ տարբեր
զօրութեանց ձեռքը եւ կը կորսնցնէ իր անունն
ու կոչումը: Ճշմարիտ է նաեւ սա կէտը թէ երբ

եկեղեցին Ս. Հոգւոյն միաբանութիւնը կորսնցնէ,
եթէ նոյնիսկ ունենայ ալ արուեստական միջոցնե-
րով, հանդէսներով, երեկոյթներով, ճաշերով, երգ-
չախուրմերով ստեղծուած մարդկային գեղեցիկ
միաբանութիւն մը, տակաւին անիկա կը դադրի
եկեղեցի կոչուելէ եւ կ'ըլլայ մարդկային կազմա-
կերպութիւն մը, ընկերութիւն մը միայն:

Առաքեալը այս երկու կէտերը լուեկայն եւ
բնականօրէն հասկցնելէն ետեւ կը շեշտէ մաս-
նաւորապէս մեր կողմէն ընելիքները:

Ջանալով: Այս ջանքը Ս. Հոգիին գործը չէ,
հապա մերինը: Ջանալով պահել: Մեր գործն է
ուստի եղածը, ստեղծուած անհրաժեշտութիւ-
նը պահել եւ զայն պահելու ենք խաղաղութեան
կապովը: Արդ, խաղաղութեան կապը պահելը
մեր ձեռքն է: Եկեղեցիներ կան, որոնց մէջ
չկայ ոեւէ վարդապետական դժուարութիւն եւ սա-
կայն որոնք հրաբուլի խառնարաններ են: Ինչո՞ւ,
քանզի անոր անդամներէն մէկը կամ միւսը կը
խզէ խաղաղութեան կապը, դառնութեան ար-
մատ մը կը բարձրանայ, շատեր կը պղծուին ու
միաբանութիւնը կը խանգարուի եւ Սուրբ Հոգին
տրտմած կը բաժնուի անկէ: Ջանալով, այսինքն
զապետով իր ետը, անձնական զաղափարը, իր
խորհելակերպը, իր գործելակերպը եւ զոհիւ Աս-
տուծոյ թագաւորութեան համար եւ ընդհանուր մի-
աբանութեան սիրոյն, այն ատեն անկարգութիւն-
ները կը դադրին: Աչքերնիս բանալիք սիրելիներ,
կան բաներ որոնք Ս. Հոգիին գործն են, իսկ
կան բաներ, որոնք մենք ընելու եւ անոնց մէջ
ջանքով յարատեւելու ենք: Այս ջանքերէն մէկն
է Սուրբ Հոգիին միաբանութիւնը խաղաղութեան

կապովը պահել: Ով հաւատացեալ, միտքդ պահէ Ս. Հոգիին այս պատուէրը, Սուրբ Հոգւոյն միաբանութիւնը խաղաղութեան կապովը պահէ: Ասոր համար պիտի աղօթես, բայց դուն ինքդ պիտի համոզուիս ու խաղաղութեան կամք ընես, այն ատեն Ս. Հ. ալ քեզի յաջողութիւն պիտի տայ:

Այս միաբանութիւնը կրնանք պահել իրերայաջորդ եւ իրարու կապուած չորս գետնի վրայ:

ա. Սուրբ Հոգիէն ծնած ըլլալով: Օրհնեալ է Աստուած ու մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հայրը, որ իր առատ ողորմութեանը համեմատ մեզ նորէն ծնաւ կենդանի յոյսի համար (Ա. Պետ. Ա. 3): Յովհաննէս առաքեալ այս ծնունդը կը բնորոշէ հետեւեալ բառերով, «Որոնք ոչ արիւնէ, եւ ոչ մարմինի կամքէ, ոչ ալ մարդու կամքէ, հապա Աստուծմէ ծնան» (Յովհ. Ա. 13): Ան որ Աստուծոյ Որդւոյն կը հաւատայ, վկայութիւնը իր մէջ ունի (Ա. Յովհ. Ե. 10): Գիտեմ որո՞ւ եմ հաւատացեր (Բ. Տիմ. Ա. 12): Ամէն ով որ կը հաւատալ թէ Յիսուս Քրիստոսն է, Աստուծմէ ծնած է (Ա. Յովհ. Ե. 1): Գիտենք որ մենք Աստուծմէ ենք... Գիտենք որ Աստուծոյ Որդին եկաւ ու մեզի միտք տուաւ, որպէսզի ճշմարիտը ճանչնանք, ու այն ճշմարիտին մէջ ենք, իր Որդւոյն Յիսուս Քրիստոսի մէջ: Ասիկա է ճշմարիտ Աստուած ու յաւիտենական կեանք (Ա. Յովհ. Ե. 19, 20): Ահա գետին մը, հաստատուն եւ անխախտ վէճը՝ Քրիստոս, որուն վրայ բոլոր կատարեալները միաբան են (Յովհ. Ժ. 2), ատկէ զատ հիմ չկայ միաբանութեան: Կան շատեր որոնք բառերու դարձգարձիկ ոճերով նմանողաբար շինուած բայց տակը բոլորովին տեղի տուող աւազէ գետին մը պատրաստած, կ'ուզեն Քրիստոսի հաւատացողներուն հետ մէկ ըլլալ. այս կարելի չէ: Կաւ եւ մետաղ իրարու հետ չեն կրնար միանալ: Աստուածացող Քրիստոս մարդը եւ մարդացող Քրիստոս Աստուածը մէկ չեն երբեք, ու եթէ այս երկու վարդապետութեանց հաւատացող երկու անձեր իրարու հետ միացած ըլլան աղօթքի մէջ, անոնք նոյն Քրիստոսի չէ որ կ'աղօթեն: Ասով կրնանք ճանչնալ Աստուծոյ Հոգին, Ամէն հոգի որ Յիսուս Քրիստոսը մարմինով եկած կը խոստովանի, Ասիկա Աստուծմէ է:

Արդ, զտած ենք առաջին կոռւանը միաբանութեան, որուն վրայ կեցած ենք: Քրիստոս Յիսուսի հաւատքով Ս. Հոգիով Աստուծմէ ծնած ըլլալ:

բ. Սնանկելով նոյն կեցակութիւն: Կենալով առաջին տուեալին վրայ, յայտնի է որ նորէն ծնած մը պէտք է նաեւ ուտէ, սնանի մեծնալու համար,

որպէսզի Աստուծոյ մարդը կատարեալ ըլլայ ամէն բարի գործերու պատրաստուած (Բ. Տիմ. Գ. 17): «Մինչեւ ամէնս ալ հասնինք հաւատքին ու Աստուծոյ Որդին ճանչնալուն միաբանութեանը, կատարեալ մարդ ըլլալու, Քրիստոսի լման հասակին չափը ունենալու» (Եփես. Դ. 13): Որպէսզի անոնց սիրտերը մխիթարուին՝ սիրով միացած ու կատարեալ իմացողութեան բոլոր ճոխութեանը հասնին, այսինքն չօր Աստուծոյ եւ Քրիստոսի խորհուրդին գիտութեանը, որուն մէջ իմաստութեան ու գիտութեան բոլոր գանձերը պահուած են (Կող. Բ. 2, 3): Աստուծոյ ու Քրիստոսի խորհուրդին գիտութեանը հասնելու համար, Ս. Հոգին օգնութեան կը հասնի մեզի: Ասիկա ուսուցիչն է, եւ խորունկ գիտութիւնները հետզհետէ կը պարզէ, դիւրամարտելի կ'ընէ եւ կը մատուցանէ մեզի, սկսելով կաթնէն եւ կը տանի զմեզ մինչեւ հաստատուն կերակուրին, այսպէս ամէն յամարտութեան առաջնորդելով զմեզ: Աստուծոյ զաւակաց Ս. Հոգիին կողմէ որպէս կերակուր մատուցուած է բոլոր Գիրքը (Բ. Տիմ. Գ. 16): Այդ երկնային Ուսուցչին դպրոցին մէջ եւ Անոր հրկողութեան տակ աշակերտները ապահով են սորվելու եւ մեծնալու ու հաստատուն կերակուր ուտելու, խորհուրդներ զանազանելու եւ մերժելու հովերէն ասդին եւ անդին տարուբերուող վարդապետութիւնները կամ ինքնակամ կրօնքները, որոնց հետեւելով մարդիկ ինքզինքնին կը խաբեն եւ կը մոլորին ու կը մոլորեցնեն: Տէրը Պերզամոնի եկեղեցիին կ'ըսէ թէ Բաղակի վարդապետութեանն ու Նիկողայոսեանց վարդապետութեանն մէկդի կեցողին եւ Աստուծոյ խօսքով անոնց յաղթողին ուտել պիտի տալ պահուած մանանայէն:

Սուրբ Գրքին մէջ շահեկան գլուխ մը կայ Յովհ. Զ. զոր կ'արժէ ուսումնասիրել: Այս գլուխուն մէջ Յիսուս Ինքզինքը կը ներկայացնէ իբր կերակուր ըսելով թէ Ինքն է կենաց հացը. երկինքէն իջած հացը, կենդանի հացը: Ս. Հոգիին համար ալ կ'ըսէ թէ «Ասիկա Զիս պիտի փառաւորէ, վասնզի իմինէս պիտի առնէ ու ձեզի պատմէ» (Յովհ. Ժ. 14): Ասիկա Ինծի համար պիտի վկայէ (Յովհ. Ժ. 26): Արդ, Ս. Հոգիի դուրոցին ամենակարեւոր եւ միակ նիւթը Յիսուս Քրիստոսն է: Մենք մեր բոլոր կեանքին մէջ թէ հոս Ս. Գրքին մէջ եւ թէ երկինքը, իր սուրբ ներկայութեան՝ Քրիստոսը պիտի սորվինք. այս է մեր հոգեւոր կերակուրը, ու Անով — Անոր լման հասակին չափը ունենալու հասնիլ:

Այս նոյն կերակուրէն սնանիլ եւ նոյն միջա-

վայրին մէջ մնալ, արդէն ինքնին երաշխիք մըն է միաբանութեան:

Հաւատացեալներ, որոնք նոյն հացէն կ'ուտեն և նոյն ուսուցչէն կը սորվին, անմիջապէս զիրար կը հասկնան և բնաւ զիրար չճանչցող, նոյն դաստիարակութիւն ունեցող Աստուծոյ զաւակներ քանի մը վայրկեանէն իրարու հետ միաբան են այնպէս, որպէս թէ երկար տարիներ իրարու հետ յարաբերած ըլլային: Մինչդեռ Սբ. Հոգին զպրօքին մէջ կրթուող մը եւ բարձրագոյն քննադատութեան հովերէն բռնուած երկրորդ մը իրարու բոլորովին օտար են, իրենց ոճերը օտար, մտքի, սրտի տրամադրութիւնները օտար են: Ինչ ծիծաղելի հակադրութիւն մը պիտի ըլլայ անոնց խօսակցութիւնը, երբ անոնք միասնաբար ուսումնասիրեն Ղուկ. Ա. 26-29, Յովհ. Ա. 1-4, Յովհ. ԺԱ. ԻԱ. եւն: Աւելի զիւրին է թուաբանութիւնը քերականութեան հետ համադրել, քան թէ անոնց խօսքերը: Այս երկու անձերուն մէջ կարելի է հոգեւոր միաբանութիւն մը ազնկալել:

Գ. Լծուելով նոյն գործին համար: Միասնականութեան երրորդ սքանչելի գետինն է Աստուծոյ գործին մէջ բաժին ունենալը: Երբ զաւակ մը ծնած է, երբ ան հիւանդ չէ և ժամանակին ալ կ'ընդունի իր անունը ու կը մեծնայ, բնականաբար կ'սկսի շարժիլ և բան մը ընել: Աստուծոյ զաւակաց մէջ ալ իրականութիւնը նոյնն է: Անկախ նախ իրեն նմանները փնտռելու, անոնց հետ յարաբերելու, զանոնք սիրելու եւ անոնց ծառայելու ետեւէ կ'ըլլայ: Գաղ. Ե. 22ի Հոգւոյն պտուղը կը տեսնենք ամէն Աստուծոյ զաւակի վրայ, թէ և բաղադրաբար քիչ մը աւելի կամ պակաս: Անոնք զիրար կը սիրեն, քանզի միեւնոյն Հօրմէն ծնած են, զիրար կը սիրեն, քանզի նոյն հասարակաց շահերով կապուած են իրարու եւ նոյն նպատակին շուրջ հաւաքուած են: Անոնք շատ բան ունին իրարու պատմելիք: «Ձեզի կը պատմենք այն յաւիտեանակաւ կեանքը զոր Հօրը քով էր ու մեզի յայտնուեցաւ», Իրարու վրայ կը գուրգուրան, «Քանզի կ'ուզեմ որ զիտնաք թէ ինչպէս մեծ անծկութիւն ունիմ ձեզի համար... ու ամէն անոնց համար որոնք իմ երեսս մարմինով չեն տեսեր, որպէսզի անոնց սիրտերը մխիթարուին՝ սիրով միացած ու կատարեալ իմացողութեան բոլոր ճոխութեանը հասնին (Կող. Բ. 2): Անոնք չեն դադրիր իրարու համար ազօք ընելէ ու խնդրուածք մատուցանելէ որ անոնք կատարեալ ըլլան Աստուծոյ կամքին զիտութիւնովը բոլոր իմաստութիւնով ու հոգեւոր

հանճարով: Անոնք իրարու համար ցաւ կը քաշեն, ինչպէս մարմինի մը միւս անդամները հիւանդ անդամի մը համար կը քաշեն: Անոնք Քրիստոսի պատուէրը կատարելու ջանք կ'ընեն, «Գացէք բոլոր ազգերը աշակերտեցէք»: Այս հոգիով բռնկած Պօղոս Երուսաղէմէն սկսեալ մինչեւ Լիւրեկացուց կողմերը, այո՛ բոլոր աշխարհը Քրիստոսի Աւետարանը լեցուց: Ու ինքզինքը պարտական կ'զգար Հրեային ու Յոյնին, բարբարոսին եւ իմաստունին ու անմիտին, Աւետարանին լեցուն օրհնութիւնովը զալով անոնց: Քրիստոսի աչքը մեզ կ'ստիպէ: Նոյն Հոգիով լեցուած էին բոլոր առաքեալները, նոյն Հոգիով լեցուն էին ճան Փէյթըն, ճան Ուիլքինս, Ուիլքինս Բէյքըր, Հըտսըն Թէյլըր, Ֆինի, Մուտի, Թօրրի եւ անոնց յաջորդները մինչեւ այսօր: Եկեղեցին ունի գեղեցիկ գետին մը միաբանութեան, անխախտ գետին մը նոյն Տէրով յազիրին մէջ, զործունէութեան գետինը, ուր թէեւ անոնք տարբեր գործերով զբաղին ալ, բայց ամբողջութեամբ յազիրն է որ կը մշակուի եւ կ'արդիւնաբերուի:

Դ. Նոյն յուսով անգործութիւն: Վերջին գետինը Ս. Հոգին միաբանութեան՝ քրիստոնէական յոյսն է: Այս յոյսը մասամբ մը կ'իրագործուի մեր առօրեայ կեանքին փորձառութեանց մէջ, հոգեւոր նոր տեսութեանց եւ յաղթական կեանքի մարգերուն մէջ: Բայց յոյսը այս աշխարհի վրայ չվերջանար: Մենք գիտենք թէ այս աշխարհի նեղութիւնները, փորձութիւնները, բոլոր իրարանցումները, քաղաքական ելեւէջները վերջ մը պիտի գտնեն շուտ հասնելովը երկնային Իշխանին, Թագաւորաց Թագաւորին որ այս աշխարհի վրայ արդարութեան, սրբութեան, աստուածային թագաւորութիւնը պիտի հիմնէ և թագաւորէ շարժելով իր արդարութեան մականը ամենուն վրայ: Հոն մեզք չպիտի մտնէ:

Մենք կը յուսանք թէ իր Որդւոյն յարութիւն առնելովը, զմեզ կենդանի յոյսին համար նորէն ծնանող Հայրը, շատ մը բնականաբաններ ունի մեզի համար, պատրաստուած իր Որդւոյն ձեռքով, որպէս անեղծ ու անարատ եւ անթառամ ժառանգութիւն մը, հոն, ուր ալ ցաւ չկայ, արցունք չկայ, հապա լոյս ու սէր կայ յաւիտեանս Գառնուկին ներկայութեան մէջ: Մենք կը յուսանք թէ վերջապէս բոլոր սուրբերուն հետ միասին, բոլոր երկնային զօրքերուն ներկայութեան, յաւիտեանս յաւիտենից պիտի թագաւորենք Քրիստոսի հետ, որ ամէնը կը լեցնէ ամէն բանի մէջ:



ԱՍՏՈՒԾՈՅ ԶԱԽԱԿԸ ԵՒ ՄԵՂՔԸ

(Վեր. Ա. Զ. ԵՂՈՅԵԱՆ)

Բանաստեղծ Լիօնի Միլո-

Թեանի ժողովին մէջ

Այսօր ուշադրութեան առնենք Աստուծոյ գաւակին եւ մեղքի միջեւ եղած յարաբերութիւնը, հիմնելով մեր խօսքերը հետեւեալ համարներուն վրայ, զորոնք ձեր յատուկ ուշադրութեան կը յանձնեմ: Հոով. Է. 20, Զ. 1-15, Է. 13-24, Ը. 33-39, Բ. Կոր. Բ. 14:

Եթէ Աստուծոյ գաւակները իրարու հետ սիրոյ յարաբերութեան մէջ ըլլան, մեղքը կը պակսի եւ անոր ազդեցութիւնը կը կտրուի:

Հոով. Ե. 20ի մէջ կը հասկնանք թէ Օրէնքը սուրբ եւ արդար է, մենք զանիկա չենք կրնար մերժել եւ ոչ ալ մէկզի ձգել:

Աստուած տուած է զայն, որպէսզի զայն կատարելով արդարանանք ու փրկուինք, բայց փորձառութիւնը մեզ ցոյց տուած է թէ Օրէնքը չենք կրնար լման կերպով կատարել, ուրեմն Օրէնքը զմեզ կը դատապարտէ, կը դատապարտէ մեր մեղանչական բնոյթը, քանզի արդարաւորապէս համար անոր պահանջածները կատարելու մէջ կը թերանանք: Այս պատճառաւ Տէր Յի-

սուս Օրէնքին արդարութիւն ըրաւ եւ Իր շնորհքը տարածեց մեր վրայ: «Ուր աւելի եղաւ մեղքը, հոն աւելի եղաւ շնորհքը»: Ուրեմն ալ հիմա ի՞նչ ըսենք, մեղքի մէջ մնա՞նք արդեօք, որպէսզի շնորհքը շատնայ, Հոով. Զ. 1: Շատեր այսպէս չեն ըսեր, բայց այսպէս կ'ապրին եւ Աստուծոյ օրէնքը կատարելու մէջ զանցառու են, քանզի Աստուծոյ շնորհքը շատ է: Սխալ կերպ: Հոով. Զ. 6, «Ձայս գիտնանք որ մեր հին մարդը Անոր հետ խաչուեցաւ, որ մեղքի մարմինը փճանալ, որպէսզի ասկէ ետեւ մեղքի չծառայենք: Փճանալ կը նշանակէ անզօր ըլլալ: Մարմինը անզօր ըլլալու է: Արդ, եթէ մարմինը զօրաւոր է, մեղքի պիտի ծառայենք, եթէ չզօրանալ մեղքի պիտի չծառայենք: Ուստի ասոր համար Պօղոս առաքեալ կը փնտռէ Քրիստոսի յարութեան զօրութիւնը, Անով ապրելու, քանզի Անոր միջոցաւ մարմինը կը փճանալ եւ մեղքի ծառայութիւնը կը դադրի:

Շնորհքը ոչ միայն զատապարտութենէ կ'ազատէ զմեզ, հապա կեանք կուտայ որ ապրինք սրբութեան մէջ հաստատուած եւ արդարութեան պտուղներ բերելով:

Անցնինք Հոով. Է. 13-24ի: Օրէնքը բարի է, ոչ թէ օրէնքը զմեզ մեղցուց, հապա մեղքը: Մեղքը մեղաւոր է: Աստուած օրէնքը տուաւ որպէսզի մեղքը աւելի մեղք ըլլայ, աւելի գարշելի, ապակիւնած եւ մեղաւոր ըլլայ (հ. 18):

Իմ մարմինիս, այսինքն բնաւորութեանս մէջ մէկ բարի բան մը չընակիր, կամեցողութեանս համեմատ բարին ի գործ դնել չեմ կրնար: Ուստի կ'եզրակացնեմ թէ ես գերիմք եմ, բայց ոչ թէ իմ կամքովս, հապա կը մեղանչեմ ստիպուած: Ստիպումով ծառայութիւնը գերութիւն է:

Բայց կարդանք Հոով. Ը. 33-39, «Ո՞վ է որ Աստուծոյ ընտրածներուն դէմ մեղադիր ըլլայ», մարդիկ մեզ կը մեղադրեն, երբեմն իրաւունքով ալ, բայց թող ընեն, Աստուած է մեր արդարութիւնը, Անիկա մեզ կ'արդարացնէ: Քրիստոս թէեւ կը դատապարտէ մեղքը, բայց կը միջնորդէ Իրեններուն համար եւ կը բարեխօսէ մինչեւ Իր գալուստը: Ուրեմն ո՞վ պիտի գտէ մեզ Քրիստոսի սէրէն: Հոով. Է. զլուխը կը վերջանայ ողբի հարցական հառաչով մը, Ո՞վ գիտ պիտի ազատէ այս մահացու մարմինէն (հմր. 24): Ը. զլուխը կը վերջանայ յաղթանակով մը: Ուրեմն յաղթութիւնը ապահովուած է Քրիստոսով: Անիկա է մեր յաղթութիւնը (Հո. Է. 25 ա մասէն մինչեւ Ը.ի վախճանը):

Առնենք նաեւ Բ. Կոր. Բ. 14, եթէ մեր յաղթութիւնը աշխարհի վրայ ըլլալ, արդէն աշխարհ

Հաւատացեալներու խումբը այս յոյսերով առ լի ակնկալուց կ'սպասէ իր սիրելի Փրկչին, որ խոստացած է նորէն գալու եւ շուտով գալու: Այս յոյսը անոնց համար սրբութեան եւ մաքրութեան եւ նորանոր տեսիլներու ամենազեղեցիկ զրգապատճառն է: Իրաւունքով Պետրոս առաքեալ կ'ըսէ, «Ձեր անձերը մաքրելով Հոգիին միջոցաւ՝ ճշմարտութեան հնազանդելով, եղբայրսիրութեան մէջ անկեղծ ըլլալով, սուրբ սրտով մէկգմէկ սլինդ սիրեցէք» (Ա. Պետ. Ա. 22):

Հոս կ'ուզենք կանգ առնել այն գոհունակութեամբ թէ ապացոյց ունինք Ս. Հոգիին կազմած եկեղեցւոյ միաբանութեան ու նաեւ ունինք այն գետիները, որոնց վրայ կեցած մենք ջանք ընելու ենք այդ միաբանութիւնը պահելու:

Տէրը յաջողցնէ Իր գաւակները Սուրբ Հոգիին միաբանութիւնը խաղաղութեան կապով պահելու: Աղօթենք ասոր համար: Թ. Ն. Ղ.

յաղթուած է: Սատանան յաղթուած է. անիկա կ'սպասէ այն օրուան, երբ այդ վճիռը իր վրայ պիտի գործադրուի: Բայց ան որ մեղքի մէջ է, պարտուած մըն է պարտուածէն: Ի՞նչ ցաւալի բան է այս, սակայն աւելի ցաւալի է երբ հաւատացեալ մը անհաւատութիւնով պարտուածէն կը պարտուի: Դիտնանք ուստի թէ Քրիստոս յաղթած է աշխարհի եւ մեզ ալ միշտ յաղթող կ'ընէ:

Այս երեք յաղթութիւնները գործնք տեսանք, տարբեր յաղթութիւններ են: Հոռով. Է. ի յաղթութիւնը մեղքի վրայ տարուած յաղթութիւնն է: Հոռով. Ը. ի յաղթութիւնը դժուարութեանց դէմ եղած յաղթութիւնն է, իսկ Բ. կոր. Բ. 14 ի յաղթութիւնը Աւետարանի գործին մէջ եղած յաղթութիւնն է: Եթէ մէկը յաղթական է մեղքին վրայ, կրնայ յաղթել նաեւ դժուարութեանց. օր. հիւանդութիւն, նեղութիւն, յուսահատութիւն, հպարտութիւն եւայլն: Եթէ Աստուծոյ մէկ ծառան պտուղ չտեսնելով կը յուսահատի, երբ ուրիշ մը պտուղ բերելով կը հպարտանայ, մեղքին վրայ յաղթական չէ: Այս երեք յաղթութիւնները իրարու հետ կապուած են. մէկը չկրնա՞յ ըլլալ առանց միւսին: Մեղքը կալ մեր մարմիններուն մէջ երեք բնոյթով. զմեզ անէծքի տակ կը ձգէ (կը դատապարտէ), կը գերեզմարէ եւ կ'ապականէ: Տէրը սակայն Իր խաչին մահովը զմեզ անէծքէն ու դատապարտութենէն փրկած է, կը փրկէ անոր իշխանութենէն, պիտի փրկէ անոր գոյութենէն:

Յաղթական կեանքը մեղքի յաղթելուն կեանքն է: Ուրեմն քրիստոնէին համար աննշան ըլլալու կեանքը չէ ամօթ, հապա մեղքէն յաղթուելու կեանքը: Աստուծոյ զաւակ ըլլալը առողջ ապրելու, բարեկամ ունենալու, արտաքինապէս ուրախ ըլլալու կեանքը չէ, հապա յաղթական կեանք մը ունենալ: Երբեմն Աստուծոյ կը փրկէ հոգիներ պարտուած անձերու միջոցաւ, բայց ասանկները պիտի յանդիմանուին:

Պօղոս առաքեալ կ'ըսէ, «Մեղքին ոյժը օրէնքն է»: Երբ մենք չենք կրնար օրէնքը կատարել, մեղքը կրնայ մեզ գետինը զարնել: Եթէ օրէնքը կատարէինք, մեղքը մեր վրայ չպիտի իշխէր, օրէնքը չպիտի ըսէր ինծի գող ես՝ եթէ չգողնայի: Բայց Յիսուս մեր տեղը անէծք եղաւ եւ օրէնքը իր առածը առաւ Յիսուսէն: Ուստի Աստուծոյ մեզ օրէնքի գետնի վրայ չդատապարտեր, հապա մեզի հետ կը վարուի Յիսուս Քրիստոսի արեանը գետնին վրայ:

Յաղթական կեանքը Աստուծոյ համար մեծ

գործեր ընելու կեանքը չէ: Ի՞նչ է Աստուծոյ զանգատը Յայտնութեան մէջ՝ եկեղեցիներուն դէմ, անոր համար որ շատ գործած չեն:

Եփեսոսի եկեղեցիին կ'ըսէ, գիտեմ քու գործերդ եւ աշխատութիւնդ (գործը տարբեր է, աշխատութիւնը տարբեր, մէկը կրնայ հանդարտ գործել, բայց աշխատութիւնը քրտինքով է): Եփեսոսի եկեղեցին գործունեայ եկեղեցի մըն է, հոգիները ճանչնալու պարգեւն ալ ունի, բայց յաղթական չէ, որովհետեւ առաջուան սէրը ձգեց, այսինքն եղբայրսիրութիւնը, Աստուծոյ սիրութիւնը: 1905 թ. Տէրը մաքառեցաւ ինծի հետ, քանզի փառասէր էի, եւ կը զարմանամ թէ ինչո՞ւ Տէրը զիս կը գործածէր: Երանի անոր որ կը սիրէ:

Պերզամոսի եկեղեցին ալ թոյլտուութիւն կ'ընէ ապահներուն, աշխարհասէրներուն: Հպարտներուն թոյլ կուտայ իշխելու եկեղեցիին վրայ, հոգաբարձուներ աղա կ'ըլլան եւն: (Ա. Պետ. Ե. 3) Ոչ թէ իշխել, հապա ծառայել պէտք է: Ան որ այսպէս կ'աշխատի, սոյն հպարտներուն թոյլտուութիւն կ'ընէ, անիկա պարտուած է: Այսպէս բոլոր եկեղեցիներուն դէմ, կը տեսնենք որ Տէրը զանգատը անոնց մեղքին հանդէպ ունեցած վարժութիւնն զէմ է: Յիսուս ի թէ եկեղեցիին փառաւորութեանը կը նախ, ալ անոր կեանքին:

Կան մասնաւոր մեղքեր որոնք սանձահարուելու են, չբինակ ցանկութեան մեղքը: Յաղթական ենք. մինչեւ իսկ հոգեւոր ցանկութենէ ազա՞տ ենք: Մէկը գիտութեան կը ցանկայ, մէկը պատիւի, մէկը գործունէութիւն ունենալ կ'ուզէ, մէկը յօգուած գրել կ'ուզէ. ասոնք պիղծ ցանկութիւններ չեն, բայց ցանկութիւններ են: Տիմոթէոսի ցանկութիւնը կրնար ըլլալ լաւ քարոզիչ, գեղեցիկ հոգեւոր: ազգեցութիւն գործել: Ազա՞տ ենք այս բաներէն:

Հպարտութիւնը.— Հպարտութեան վրայ յաղթական ենք: Ի՞նչ կ'զգամ երբ մէկը քովէս կ'անցնի, ի՞նչ կ'զգամ երբ զիս հաւնողը կամ չը հաւնողը, զիս սիրողը կամ չսիրողը քովէս կ'անցնի: Ասոնք կը յայտնեն մեր հպարտութիւնը:

Թերափաւատութիւնն ու յուսափաւատութիւնը.— Երբ մեր քարոզը անպտուղ կը մնայ, երբ աշխարհն ու Սատանան կը հակառակին, կը թուանանք ու պարտուի՞նք. ազա՞տ ենք ասկէ: Մեր գործին, մեր ընկերութեան համար, հոգէ, տըրտունջէ ազա՞տ ենք: Երբ կը տրտմինք ու կը յուսահատինք, ասիկա պարտութեան նշան է: Ազա՞տ ենք չար նախանձէ, նիւթասիրութենէ, փառասիրութենէ: Հոռով. Զ. ին մէջ Պօղոս առաք.

ԱՍԻԱՅԻ ԵՌԹԸ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

ooo

(ԵՓԵՍՈՍ 34 100)

Աւաքելական շրջանի եկեղեցին

Եփեսոս, որ ներկայիս աւերակ մըն է, առաջին դարուն հեթանոս աշխարհի կրօնական կարեւոր կեդրոններէն մէկն էր: Փոքր Ասիոյ յունական շրջանի մայրաքաղաքը եւ պատմական ու դիտական ուսումնարաններով, նաեւ կախարդական գիտելիքներով երեւելի քաղաք մըն էր: Գործք. ԺԹ. 19:

Պատմութիւն, ուրկէ գրուեցաւ Յայտնութիւնը, ամենամօտիկ քաղաքն էր Եփեսոս:

Այս քաղաքը երեւելի էր մասնաւորապէս Արտեմիս չաստուածուհւոյն տաճարովը, որ 120 մէթր երկայն, 72 մ. լայն եւ 20 մ. բարձր, մաքուր քարերով շինուած եւ հաստատուած 127 սպիտակ մարմարեայ սիւներու վրայ, կը նկատուէր աշխարհի 7 հրաշալիքներէն մին:

Եւ կ'ըսէ, մեղքը ձեր վրայ պիտի չթաղաւորէ, պիտի չիշխէ: Մեզմէ միայն հաւատալ կը պահանջուի եւ հաւատքը զործնական ընել, այսինքն այն դիրքին մէջ կենալ ինչ դիրքի մէջ որ Յիսուս կեցաւ չօրը հանդէպ: Անոր կեանքին բանալին այս բառն էր, «Հայր»: Հայրը այն անձն է որ իմ ամէն պիտոյքներս կը լեցնէ, ուստի ես Անոր կատարելապէս հնազանդելու եմ, կամքս Անոր ենթարկելու եմ, չունիմ ո՛չ կամքս, ո՛չ որոշում, ո՛չ փափաք, ոչ խորհուրդ: Մեր դիրքը որդիի կատարեալ դիրքն ըլլալու է: Տէրը կ'ուզէ որ մենք կարենանք ըսել, Տէր, կ'ուզեմ ոչինչ ըլլալ, այն բաները զորս կատարեցիր խաչին վրայ, կատարէ իմ մէջս ալ: Այն ատենը անհկսկի յաղթութիւնը մեզի վրայ: Անիկա կ'ուզէ այդ յաղթութիւնը մեզի տալ, կարեւորը քու յօժարակամ ըլլալդ է:

«Որ Աստուծոյ զօրութիւնովը պահպանուած էք հաւատքով, այն փրկութեանը համար որ պատրաստուած է վերջին ժամանակը յայտնուելու» (Ա. Պետ. Ա. 5): Զօրութիւնը Անորն է, մերն է հաւատալը: Երբ կը հաւատանք Անոր զօրութեանը կը դպչինք, եւ Ան կը կատարէ ամէն բան:

Տէրը հոս ալ հաստատեց Իր եկեղեցին: Նախ Պօղոս առաքեալ երկու տարի մեծ եռանդով զործեց այս կարեւոր կեդրոնին մէջ, ուրկէ այցելուներ Տէրովը հրաշքը եւ զօրութիւնը տեսնելով խօսքը կ'ընդունէին եւ իրենց հետ կը տանէին Փոքր Ասիոյ ներսերը: Գործք. ԺԹ. Ի. 47-38:

Հոս զործեցին Պօղոս առաքեալի սիրելի եւ հաւատարիմ զործակիցները, Ակիլլոս եւ Պրիսկիլա, Տիմոթէոս, (որ նաեւ ամբոխի վայրագ հարուածներուն տակ նահատակուեցաւ), սիրոյ մեծ առաքեալը Յովհաննէս եւ ուրիշ երեւելի Աստուծոյ ծառաներ:

Եկեղեցին հաստատուած էր խորունկ հողերու կեանքի մէջ. ինչպէս կը յայտնէ Յ. Տ. 64ին Հռոմէ գրուած Պօղոս առաքեալի թուղթը, ուր Տէրը Իր խորհուրդները եւ խորունկ ճշմարտութիւնները կը յայտնէ այս եկեղեցիին, որուն սերտողութիւնը կը ցուցնէ թէ եկեղեցին ինչ կենդանի յարաբերութիւն ունէր իր Փրկչին եւ Փեսին հետ եւ որքան մօտիկ մտերմութիւն իր Սիրելիին: Բայց որքան ցաւով կը կարդանք Տէր Յիսուսի այս յանդիմանական նամակը Իր սիրելիին որ ինկած էր սիրոյ կեանքէն. հիմա լոկ անուանը համար կ'աշխատէր, հոգիներու ցաւը, Բրիտանիոյ հետ անձնական մտերիմ յարաբերութիւնը դադրած էր, ճշմարիտ սէրը պակասած եւ անոր տեղը անունը գրաւած էր:

Տէր Յիսուս կը յայտնուի այս եկեղեցիին որպէս Եփեսոսի ոսկեղէն աշտանակներու մէջ պտուտող, այսինքն եկեղեցիին վրայ հսկող եւ անոր զործերը դիտող եւ կշռող Տէրը: Նախ կը զօլէ եկեղեցին այն բաներուն համար, որոնք Իր Աստուածային սիրտը կ'ուրախացնէին, այն գործերը որոնք Իր սիրովը կատարուած էին միայն զինք փառաւորելու համար, սակայն հիմա ինկած էր Եփեսոս, Տէրովը համար զործել կը մնար, սակայն առաջուան սէրը ձգուած էր, արտաքին բաներ՝ ներքին կենդանի եւ մտերիմ յարաբերութեան տեղը անցած էին: Եփեսոսի գրած նամակովը Տէրը կ'ուզէ յայտնել թէ Իր եկեղեցին ո՛չ բարեգործական կազմակերպութիւն մըն է, եւ ոչ ալ բարոյական ընկերութիւն մը. ասոնք թէեւ կեանքի պտուղներ են զԱստուած փառաւորելու, սակայն եկեղեցին Աստուծոյ սէրը աշխարհի յայտնող եւ Տէր Յիսուս Բրիտանիոյ վկայող կենդանի մարմին մըն է: Ահա այս գիտակցութիւնը եւ սէրը կորսնցնելով ինկած էր Եփեսոս: Տէրը անոր միտքը կը ձգէ իր անկումը եւ կը յորդորէ որ ապաշխարէ, եւ թէ ոչ կ'ըսէ, «Աշտանակող տեղէն պիտի շարժուի»:

Ժեմո: Ի՛նչ ողբալի վիճակ,
լոյս եղած էր Եփեսոս եւ
լոյս սփռած իր չորս
կողմը, սակայն այս ի՛նչ
տխուր վախճան...: Մէկ
կողմէն յափշտակող դայ-
լերու յարձակումը, հմր. 6,
միւս կողմէն ներքին վէ-
ճեր եւ անուանական բա-
ժանմունք տկարացուցին ե-
կեղեցին հ. 2, Գ. Յովհ. 9-12,
ինչպէս մարգարէացքեր էր
Պողոս առաքեալ, Գործք.
Ի. 29-30: Նիկողայոսեանց
ուժովնալը, որոնց մասին
պիտի սերտենք Պերգամո-
նի մէջ, կը մտահոգէր Տէ-
րոյն ճշմարիտ գաւակնե-
րը, որոնց Աստուծոյ կամ
քին հակառակ գործերը կը
վշտացնէին սուրբերուն
սիրտերը: Եփեսոսի եկեղե-
ցին կ'ատէր Նիկողայոս-
եանց գործերը, ինչ որ ու-
րախութեամբ կը յիշուի
Տէր Յիսուսի կողմէն:

Տէրոյն գալստեան մա-
սին բան մը չյիշուիր այս
նամակին մէջ, որովհետեւ
Տէր Յիսուսի երկրորդ գա-
լուտը եկեղեցական այս
շրջանին մէջ պիտի չըլ-
լար, հազա Յիսուս կը քա-
ջալերէ իր եկեղեցին կե-
նաց ծառէն ուտելու օրհնե-
ալ խոստումովը, որպէս-
զի նա յաղթէ և առաջուան
գործերը ընէ, սիրոյ գործե-
րը, լուսոյ գործերը, որով
Ֆիայն ինք պիտի փառա-
ւորուէր:

Եփեսոս կը ցուցնէ առա-
ջին դարու վախճանին ընդ-
հանուր աշխարհի վրայ
ապրող հաւատացեալներու
հոգեւոր վիճակը եւ խրատ՝
այսօր ապրող բոլոր հաւա-
տացեալներուն, անոնց՝ ո-

ԱՂԹՔՍ

Ասոնց մեծագոյնը սէրն է Ա. Կոր. ԺԳ. 13

Ա՛ռ ինծմէ, ա՛ռ, ով Աստուած, ինչպէս կամքդ կը հաճի,
Ամէն ծաղիկ, ամէն ծառ, բայց միայն թող որ աճի
Սըրտիս անշուք ծաղկոցին մէջ սիրոյ հունտը քընքոյշ.
Ձի Դուն գիտես, Դուն գիտես որ այս կեանքըս վաղ կամ ուշ,
Առանց անոր ստուէրին գերթ «վաղահաս դրամենի»
Արեւահար, Տէ՛ր, ափսո՛ս, պիտի թօշնի՛ ու թօշնի՛...

Մարէ՛, մարէ՛, ով Աստուած, եթէ կ'ուզես ամէն ջան
Որ մինչեւ ցարդ կեանքիս մութ երդիքին տակ կը պըլպըլայ.
Բայց թո՛ղ, բայց թող որ վառի Սիրոյ բոցը իւղարծարծ.
Ձի Դուն գիտես, Դուն գիտես, առանց ատոր Տէ՛ր, յանկարծ,
խաւարին մէջ ողբակոծ այն կոյսերուն պէս յիմար՝
Ես ալ գուցէ մոլորիմ դառնակըսկիծ, հոգեւա՛ր...

Մերկացո՛ւր զիս, ով Աստուած, ու մերկացուր զիս լրման,
Այնքան՝ որ ես պաղատիմ մուրացիկի մը նման,
Բայց ինձի լոկ խընայէ Սիրոյ յակինթը անգին.
Ձի Դուն գիտես, Դուն գիտես, առանց այդ մեծ շնորհքին՝
Մեծատան պէս իմ հոգիս՝ Ղազարոսէն ալ աղքատ,
Գուցէ յաւէտ տըւայտի մը շտածարաւ ու վըհա՛տ...

Կրտրէ՛ ինծմէ, ով Աստուած այն հոգիները բոլոր
Որոնք սըրտիս սերտօրէն հանգուցուեցան օրէ օր,
Բայց ինձի լոկ վիճակէ, Սիրոյ Հոգիդ մըշտավառ,
Ձի Դուն գիտես, Դուն գիտես, առանց ատոր միշտ թըշուառ
Կայէնի պէս անօրէն, Կայէնի պէս խըղճահար՝
Կեանքըս պիտի թաւալի՛, ու թաւալի ընդերկա՛ր...

Ու քանի որ ո՛վ Աստուած, ինչպէս առանց արեւի,
Ո՛չ բլնութիւնը բերրի, ո՛չ հորիզոնը ծաւի
Կըրնան հըմայք մ'ունենալ, կամ նոյնիսկ յոյսը կեանքին,
Ես ալ առանց Հոգիիդ Սիրոյ անշէջ կըրակին,
Յաւերթօրէն ցըրտահար, հոգեդողդըլ եւ անյոյս՝
Պիտի ով Տէր, սարսըռամ գուրսի խաւարը անլոյս:

Ու վերջապէս ո՛վ Աստուած, քանի որ ինձ ուսուցիր,
Թէ ես՝ առանց սիրաբուղիս Գու Հոգիիդ ամբասիր,
Ձեմ կըրնար ո՛չ խաղաղիլ, ո՛չ ալ ժըպտիլ ու երգել,
Տո՛ւր, կ'աղաչեմ, տո՛ւր ինձի այդ Սէր Հոգիդ անարգել,
Որ ես Բեզմով սիրեմ Բեզ, ու դեռ սիրեմ Բեզ համար՝
Ընկերիս հետ թըշնամիս ու զիս հիւլէս աննշմար...

Այսպէս, գո՛ցէ ով Աստուած, ամէն աղբիւր, ամէն աղ,
Ու բաց միայն սըրտիս մէջ Սիրոյ նոր ծով մ'անապակ...



ՎԵՐԱԾՆՈՒՆԴ ՀՈԳԻՒՆ ԵՒ

ՄԱՐՄԻՆԻՆ

«Ճամբայ կայ որ մարդուն շիտակ կ'երենայ, բայց անոր վախճանը մահուան ճամբաներն է»։ Բայց դուն ո՞վ մարդ, որ կեանքը կը սիրես, քառուղիին վրայ կայնէ, ու շուրջդ նայէ եւ հին շաւիղներուն համար հարցուր (ուրէ՛ք մարգարէները եւ առաքեալները քալեցին) ու իմացիր թէ ո՞րն է բարին՝ ու անոր մէջը քալէ որ քու հոգիդ հանդիստ գտնէ (կարգա Երեմ. 2. 16)։

Այս ըրէ, վասնզի այս վերջերս վաղեմի սահմանին նշանը (բարեպաշտութիւն եւ անառակութիւն զատող գիծը) տեղէն վերցուեր է։ Բայց մենք իբրեւ բանական արարածներ կարող ըլլալու ենք ամէն պարագայի բարին ու չարին մէջտեղ զանազանութիւն ընել։ Որոշապէս պիտանալու ենք թէ ո՞րն է մեզի օգտակար բանը եւ ո՞րն է վնասակարը։ Ու երբ կը գտնենք որ բարին ընելու փափաքը ունինք, սակայն անիկա որոշելու դիտութիւնը եւ գործադրելու կարո-

րոնք Քրիստոս Յիսուսով փրկուած հոգիով եւ եռանդով լիցուած սէրը կ'ապրին, ցուցնելու անոնց մեծ վտանգը թէ ժամանակի ընթացքին ամէն բան մնալով մէկտեղ կրնանք առաջուայ սէրը ձգել եւ ասով կորսնցնել ամէն բան, դադրիլ լոյս եւ օրհնութիւն ըլլալէ։ Ա. Կոր. ԺԳ. 5 հաւատացեալ մը զոնէ շարաթը անգամ մը կարգալով թող խորհրդածէ եւ ազօթէ անոր վրայ, որպէսզի այսմեծ վտանգէն զգուշանայ։ Տէր Յիսուսի փնտռածը մեր սէրն ու սիրտն է։

Յովհաննէս առաքեալի մահովը (Յ. Տ. 400) կը վերջանայ առաքելական շրջանը, սակայն ամէն ատեն եւ շնորհաց բոլոր շրջանին պիտի գտնուին այս զասակարգէ հաւատացեալներ, որոնց ուղղուած կը մնայ այս յանդիմանական պատգամը, «Քու առաջուան սէրդ ձգեցիր... ապաշխարէ... եթէ ոչ...»։

Տէրը պահէ մեզ այս մեծ վտանգէն եւ օրհնէ մեզ ու արթուն պահէ Իր Հոգիովը։ Ամէն։

Վեր. Ա. Օ. ՓԱՓԱՋԵԱՆ

Փօստ Օպէնսա

դութիւնը կը պակսի մեզմէ... խոնարհութեամբ ընդունելու ենք թէ մեզք գործելով մեր բնաւորութիւնը վատթարացեր է եւ մեր տեսողութիւնը տկարացած։

Այս աղէտը մեր վրայ բերողը այս աշխարհիս աստուածը (Սատանան) է, որ անհաւատութեան մեղքով մարդոց մտքին աչքերը կը կուրցնէ որպէսզի Քրիստոսի փառաց աւետարանին լոյսը անոնց վրայ չծագէ, ու մեղքով իրեն ծառայեցնէ (կարգա Բ. Կոր. Դ. 4)։ Բայց այս դրութիւնը չի կրնար Աստուծոյ փառքին համար գործածուիլ։ Աստուծոյ ըլլալու չէ։ Մեզ Ստեղծողը ի բարին փոխող փորձառութեան մը անցնելու է մեզ որպէսզի մեր հոգին չարչարող վիշապին դէմ դնելու եւ անոր յաղթելու կարող ըլլանք։ Յիսուս Դաւանակին մարդեղութիւնը ճիշդ այս գործն է որ մեզի համար կը կատարէ։

Հիմա ուրեմն մէկը, որուն մտքին աչքերը չեն տեսներ բայց կը փափաքի բարին ընել, այդպիսի իղճալին թախանձելով կը հրաւիրենք որ մեր Տէրջը Յիսուս Քրիստոսի գիմէ... «Որդին եկաւ ու մեզի ՄիՏՔ տուաւ որ ճշմարիտը ճանչնանք, եւ այն ճշմարիտին մէջ ենք, Իր Որդւոյն Յիսուս Քրիստոսի մէջ, ասիկա է ճշմարիտ Աստուած եւ յաւիտենական կեանք»։ Սրդ աս համարէն անմիջապէս կը հասկնանք որ Յիսուս Քրիստոս ճշմարիտ Աստուած է եւ աս բանին համար կը կենայ Աստուածութեան ւթոթին վրայ, որպէսզի որոնք որ նորոգեալ միտք մը ունենալ, ճշմարտութիւնը ճանչնալ եւ յաղթական կեանք մը ապրիլ ուզեն, առանց յապաղելու Իրեն դիմեն։

Տէրը Իրեն եկողներուն կ'ըսէ, «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ քեզի, եթէ մարդ մը նորէն չծնանի, չկրնար Աստուծոյ թափաւորութիւնը տեսնել» եւ ոչ ալ առանց «Չուրէն ու Հոգի էն» ծնանելու կարող պիտի ըլլայ Աստուծոյ թափաւորութիւնը մտնել։ Նորէն ծնանիլ պարագայէս կը նշանակէ մեղքի մէջ մեռած հոգի մը նորէն հոգեւոր կեանքի մէջ բերել։ Ուրիշ միջոցներ գործածել մեռեալը կենդանացնելու համար ծաղրելի ջանքեր պիտի ըլլան։ Մեռեալին կիսմը սլէսքէ «Ու աս կեանքը Անոր Որդւոյն մէջ է»։ Մեռեալին քարոզել որ բարի ըլլայ եւ ինքզինքը կենդանացնէ՝ այլանդակ մտքի նշան է։ Մեռեալին վերստին կեանք տալու համար միակ պաշտօնեան Աստուծոյ Սուրբ Հոգին է, Անիկա միայն պաշտօն ունի Սատանային ու մահուան լարերը քակելու եւ կենդանացնելու (կարգա Սաղմ. ԺԴ. 30 եւ Գործ. Ժ. 38)։

Արդարև նորէն ծնանելու գինը այժմ վճարուած է, անիկա Աստուծոյ Գառնուկին թափած սուրբ արիւնն է: Ով որ հաւատայ Անոր եւ սրտանց ապաշխարէ (ոչ Յուդային պէս զղջալ հապա Պետրոսի պէս) ու դարձի գայ, պիտի՝ փրկուի (նորէն ծնանի): Բարեբաղդաբար Աստուած մեզ բոլորովին չլքեց երբ մեղքով ապականեցանք, հապա անկէ ազատելու բնագործ եւ բարին չարէն նախամեծար սեպելու գիտակցութիւնը չափով մը մեր մէջ կենդանի պահեց...: Ու երբ «ժամանակներուն լրանալուն տնտեսութեանը մէջ» Իր Որդին մեզի ուղարկեց, Անով կեանք ստանալու համար, առիթէն կրցանք օգտուիլ...: Օրհնեալ ըլլայ Անոր Մեծ անունը:

Սիրելի բարեկամս, դուն որ այս տողերը կը կարդաս, եթէ մինչև հիմա քու գործքերուդ վրայ յոյս դնելով քու արդարութեանդ կոթնած ես, կ'ազանեմ քեզի որ համապատասխան թէ սխալած եմ... Եթէ քու բարի գործքերուդ վրայ Յիսուս Գառնուկին արդարութիւնը հաւատքով չաւելցընես, գիտցիր որ դուն բնաւ զԱստուծոյ պիտի չի տեսնես եւ ոչ ալ Անոր սուրբերուն հետ պիտի ըլլաս Անոր թագաւորութեանը մէջ: Քանզի կնիկէն ծնածներուն անդամներուն մէջ մեղքի օրէնք մը կայ որ հոգիին դէմ կը պատերազմի. դուն ինքդ այս օրէնքին դէմ ոյժ մը չունիս, ասիկա քեզ դժոխք կը տանի. ինչո՞ւ կ'արսուիս: Շուտով քանի որ պատեհութիւնը ձեռքդ է ու Սուրբ Հոգին քեզ կը հրաւիրէ, գտնուած տեղդ ծունկիդ իջիր, Յիսուս Քրիստոսի կեանքի Հոգիին օրէնքին դիմէ, որ քեզ մահուան օրէնքէն ազատէ (կարդա Հոով. Է. 23, Ը. 2, 3):

Եւ դուն, իմ աւանդապաշտ բարեկամս, չըլլայ որ մարդոց իմաստուն երեւնալու համար ինքնակամ կրօնք մը ունենաս, սոսկ մարմինը յագեցնելու համար... վերջին զղջումը օգուտ պիտի չընէ քեզի. քու սիրոյդ համար կ'ուզեմ քեզի յիշեցնել թէ, «Ան որ Տէրջը կը մօտենայ, Անոր հետ մէկ հոգի կ'ըլլայ»: Իսկ «թէ որ մէկը Քրիստոսի Հոգին չունի, անիկա Անորը չէ»: «Ուրեմն թէ որ մէկը Քրիստոսի մէջ է, անիկա նոր ոտեղծուած մըն է, հիները անցան, եւ ահա ամէն բան նոր եղաւ: Հետեւապէս բուն բանը Աստուծոյ սրբութիւնովը նոր ստեղծուած ըլլալն է ու չէ թէ փուճ դաւանութիւն մը ունենալը:

Եթէ մէկը աս համարները կարդալէն յետոյ դարձեալ յամառի եւ չուղէ ապաշխարել եւ ճշմարտապէս Սուրբ Հոգիէն ծնանիլ, անանկին կ'ըսենք որ Սուրբ Հոգին այնպիսի մէկը հանդերձեալի փառքին մէջ պիտի չընդունի, անիկա դուր-

ՓՐԿՁԻՆ ՀՐԱԻՐԸ

○○○○○○

Որդին մարդոյ եկաւ որպէսզի կորսուածը փնտռէ ու փրկէ: Ղուկ. ԺԹ. 10

Եկուր Փրկչիդ ով մեղաւոր,
Հոգւոյդ կորուստն է ահաւոր,
Փրկիչդ սիրով կը հրաւիրէ,
Յօժար սրտով հընազանդէ:

Փրկչիդ սէրն է անճառելի:
Խեղճ մեղաւոր ու եղկելի,
Փրկիչդ քեզ կը փնտրէ
Որ քու անմահ հոգիդ փրկէ:

Գողգոթայի խաչին վըրայ,
Փրկիչդ առ քեզ կը գուրգուրայ,
Որ փրկէ քու հոգիդ անգին
Ու տայ քեզի ծնունդ վերստին:

Խոնարհ սըրտով ապաշխարէ,
Փութով Փրկչիդ հըպատակէ,
Ան քու մեղքերդ շուտ կը քաւէ
Եւ Իր արեամբ քեզ կը սըրբէ:

Մնանէ խօսքովս սէր Աստուծոյդ,
Զգաստացիր միշտ աղօթքով,
Զըզէ ունայն եւ փուճ իղձեր
Որ ընդունի քեզ քու սուրբ Տէր:

Մի սիրեր ո՛հ, ունայն աշխարհ,
Քեզ կը գրաւէ չար, նենգ փորձիչ,
Դուն ալ օգտուէ Փրկչիդ սէրէն,
Որ կ'ազատէ քեզ դո՞ դժոխքէն:

Ուժով եւ Պինդ վառ հաւատքով
Հեցուէ Փրկչիդ մեծ շնորհքով,
Ան պիտի տայ քեզ յաղթութիւն,
Ու ցընծալի ւրախութիւն:

ՄԷՅՄԱՐԻՏԷՍ


Հէյվլըհիլ

.....

սի խաւարը պիտի մնայ: Ուստի նայէ թէ ի՞նչ ընելու ես:

Անգամ մը առուակի մը թումբին վրայ փշուտք մը կար: Պարտիզպան մը եկաւ եւ ձեռքի բա-

ԱՆՀԱՒԱՏԻ ՄԸ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆԸ



Ն... քաղաքին մէջ մարդ մը կը բնակէր որ յայտնապէս անհաւատ մըն էր: Երբեք աղօթատեղի չէր մտներ, տանը մէջ Սուրբ Գիրք չէր պահեր եւ կը հաւաստէր թէ Աստուծոյ չհաւատար: Սակայն ասիկա իր փոքր տարիքէն մօրմէն ամէն օր լսած էր Աստուծոյ սիրոյն եւ Յիսուսը մեզի պարգեւած ըլլալու մասին: Սուրբ Գրքէն ալ շատ մը գեղեցիկ եւ թանկագին հատուածներ սորված էր որոնց վրայ ալ երբեմն կը կատակէր: Այս մարդը ամուսնացաւ կնոջ մը հետ որ իրեն պէս երկնային բաներու մասին անտարբեր էր: Շատ չանցած պզտիկ մանչ մը ունեցան. տղան գեղեցիկ, խելացի եւ աշխոյժ էր: Այնպէս պատահեցաւ որ իրենք քրիստոնեայ սնուցիչի մը խնամքին յանձնեցին մանուկը եւ շատ կանուխէն սնուցիչը մանուկին ականջին կը փսփսար Յիսուսի քաղցր անունը. անոր՝ Աստուծոյ արգարութեան, մարդոց մեղքերուն, երկինքի, դժոխքի, փրկութեան

.....

հոգը փշուտքը հողովը ու արմատովը հանեց եւ տարաւ: Փշուտքը ինքն իրեն կը մտածէր, «Արդեօք պարտիզպանը չի՞ գիտեր որ ես անպիտան փշուտք մըն եմ, զիս ինչո՞ւ կը տանի, ես ի՞նչ բանի կրնամ գործածուիլ արդեօք»: Բայց պարտիզպանը զգուշութեամբ մը տարաւ եւ իր անուշահոտ վարդենիներուն մէջտեղը տնկեց:

Ուրիշ օր մը պարտիզպանը դանակ մը բռնելով դարձեալ եկաւ ու այս անգամին փշուտքին սրտէն ճեղքեց ու անոր վրայ իր անուշահոտ վարդենիէն պատուաւ տեց:

Օրեր անցան ու ամառը եկաւ եւ փշուտքը ապշած ինքզինքին կը նայէր, դիտեց որ փոխանակ անցեալի փուշիւրը ու ստապիկները ունենալու, այժմ անուշահոտ ու գեղեցիկ վարդերով կը փթթի: Այն ատեն փշուտքը պարտիզպանին ըսաւ, «Զիս իմ հողէս ու տեղէս վերցնելուդ համար եւ զիս իմ սրտէս խոցելուդ համար հաճէ իմ անարժան շնորհակալութիւնս ընդունիլ, քանզի հիմա ամէնը կը հասկնամ»:

Պարտիզպանը փշուտքին ըսաւ, «Բու գեղեցկութիւնդ այն չէ որ քեզմէ դուրս եկաւ, հապա անկէ, որ ես քու մէջդ դրի»:

վրայ կը խօսէր: Անիկա անոր սորվեցուց շատ մը երգեր եւ բոլոր սրտովն էր որ մանուկը կ'երգէր, Ոչ մէկ մանուկ այնքան փոքր է Բալելու համար նեղ ճամբէն, Յիսուս ինք զայն կ'առաջնորդէ, Եւ կը քալէ իր աջ կողմէն. Նոյնիսկ մատաղ սիրտն է յարմար, Ըլլալ Տէրոջ Հոգւոյն տաճար:

Ծնուքը թէեւ անաստուած, բայց զուարճալի կը գտնէին իրենց պզտիկ տղուն ամէն իրիկուն բարձրաձայն աղօթքը լսել. մանուկը ինք անպայման կ'ուզէր աղօթել եւ ատանց իր փոքր սիրտը Տէրոջը բանալու չէր ուզեր քնանալ: Շատ անգամ իր հարցումներով ծնողքը բոլորովին կը շփոթեցնէր:

Իրիկուն մը, պզտիկ տղան բարի չըլլալուն համար, որպէս պատիժ մայրը կանուխէն պառկիլ զրկեց զայն: Մէկէն լսեցին որ խիստ դառնադին կուլար: Մայրը աճապարանօք քովը վազեց եւ հարցուց այդպէս մը լալուն պատճառը:

Պզտիկ ժազ պատասխանեց, «Հայրիկ, չեմ ուզեր, չեմ ուզեր»:

— Բայց ի՞նչն է որ չես ուզեր, փոքրիկս:

— Օ՛հ, չեմ ուզեր որ այսօրուան ըրած չարութիւնս երկինքը գրուի: Ո՛չ, ո՛չ, չեմ ուզեր:

Հայրը, ինչպէս ըսինք, արդէն անհաւատ էր: Բայց եւ այնպէս կ'ուզէր իր զաւակը մխիթարել: Այն պտեն միտք բերելով իր մօրը իրեն սորվեցուցածները, ախրած մանուկին ըսաւ,

— Մի լար, ժազ, եթէ կ'ուզես, քու յանցանքներդ մէկ վայրկեանի մէջ կրնան ջնջուիլ:

— Մէկ վայրկեանի՞ մէջ, պատասխանեց մանուկը, ատիկա ինչպէ՞ս կ'ըլլայ, հայրիկ:

— Ծունկի եկուր, ըսաւ հայրը, եւ խնդրէ Աստուծմէ որ քեզի ներէ Յիսուսի սիրոյն համար ու Ան պիտի ընէ:

Պէտք չեղաւ ասիկա երկու անգամ մանուկին ըսել. անմիջապէս մահիճէն վար ցատկեց, ծունկի եկաւ ու պիտի աղօթէր, երբ տեսաւ հայրը որ իր քովը ոտքի կեցած էր: Այն ատեն անոր ըսաւ, «Հայրիկ, չե՞մ ուզեր ինծի հետ ծնրադրել եւ աղօթել»:

Անիկա անհաւատի մը համար անաւոր հարցում մըն էր, բայց ինք իր զաւակին անձկութեան ականատես էր. կարելի՞ էր անոր ուզածը մերժել: Իր հպարտութիւնը փշուտեցաւ. ծնրադրեց եւ Աստուծմէ ներում խնդրեց իր սիրելի ժազին համար: Յետոյ ոտքի ելան եւ մանուկը նորէն պառկեցաւ, բայց վայրկեան մը ետք,

— Հայրիկ, ըսաւ տղան, հայրիկ, բոլորովին փստա՞մ ես թէ մեղքերս ամբողջ ջնջուած են:



ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴԱՍԵՐՈՒ ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐ

ՅՈՒԼԻՍ 5.—

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԶՕՐՈՒԹԻՒՆՈՎ ԿՈՒԳԱՅ

Դաս Գ. Առաք. Ա. 6-9, Բ. 1-11, 32-38:

Կարդալ Յովհ. ԺԶ. 7-14:

Յիսուս իր աշակերտներուն ըսած էր, «Եթէ քս չերթամ, Միքիթարիչը ձեզի չգար, հապա ե-

.....

— Այո, սիրելիս, պատասխանեց հայրը, որ կը զգար թէ իր անհաւատութեան շէնքը կը սկսէր ճարճատիւ որդւոյն անուշ ձայնին առջեւ ու Սուրբ Հոգւոյն իր մէջ ըրած գործին ազդեցութեան տակ: Աստուած իր խօսքին մէջ կ'ըսէ թէ, «Եթէ խոստովանինք մեղքերնիս, հաւատարիմ ու արդար է Անիկա մեր մեղքերուն թողութիւն տալու»: Ուստի երբ դուն իրմէ ներում կը խնդրես Յիսուս Քրիստոսի անունով, կրնաս բոլորովին վստահ ըլլալ թէ կը ներէ:

Ուրախութեան ժպիտ մը անցաւ մանուկին դէմքին վրայէն եւ կրկին գլուխը բարձին վրայ խոնարհեցուց, բայց վարկեան չանցած դեռ նոր հարցում մ'ալ ունէր:

— Հայրիկ, երկինքը գրուած գիրքէն ինչպէ՞ս բոլոր մեղքերս շնջուած են:

Ասիկա նոր հարուած մը եղաւ հօրը համար, որ քիչ մը վարանումէ ետք պատասխանեց.

— Սիրելի պզտիկ Ժաքս, Ս. Գրքին մէջ ըսուած է թէ Յիսուս Քրիստոսի արիւնը մեզ ամէն մեղքէ կը սրբէ: Տէր Յիսուս մեռաւ, իր արիւնը թափուեցաւ որպէսզի երբէ մենք զԱյն որպէս մեր Փրկիչը ընդունինք, մեր մեղքերէն ազատինք:

Այս խօսքերը շատ ուրախացուցին մանուկը եւ քիչ ետքը քնացաւ:

Գալով հօրը, այդ վարկեանը անոր համար նոր կեանքի մը մեկնակէտը եղաւ: Մէկզի քնիւնէ իր անհաւատական յիմարութիւնը, խոնարհեցաւ իր Փրկչին առջեւ ու անկէ ետք հաւատարիմ վկայ մը եղաւ: Տէրոջը այնպէս հաճելի եղած էր որ շատ պզտիկ տղայ մը գործածէ իրեն լերելու մոլորած պինդգլուխ մը:

Թէ երթամ՝ գԱնիկա ձեզի կը զրկեմ» (Յովհ. ԺԶ. 7): Եւ անոնք աղօթքով Սուրբ Հոգին խնդրել չսկսան մինչեւ Յիսուսի իրենցմէ երկինք առնելիւ (Գ. Առաք. Ա. 9, 14, Յովհ. Ի. 39):

Որպէսզի Ս. Հոգին զօրութիւնով գար, պէտք էր որ նախ.—

1. Քրիստոս մեռնէր եւ յարութիւն տանէր (Ղուկ. ԻԳ. 46):

2. Պէտք էր Նա երթար եւ աշակերտները առնէր մը «որք» մնային (Յովհ. ԺԳ. 18):

3. Անոնք պարտ էին ամէնը միաբանութեամբ միշտ աղօթք ու աղաչանք ընել (Գ. Առ. Ա. 14):

4. Անոնք պատրաստ ըլլալու էին ընդունելու (Գ. Առաք. Բ. 1):

Հաւատացեալներս սովոր ենք (եբբեմն ալ քիչ մը թուրքաբար) աղօթել ըսելով, «Տէր, Քու Ս. Հոգիովդ լեցուր մեզ»: Տէրը արդեօք մեզմէ շատերուն ստիպուած չէ՞ պատասխանել, «Հիմա չէք կրնար տանիլ» Յովհ. ԺԶ. 12: Սուրբ Հոգին թէեւ զօրութիւնով կուգայ, բայց երբեք ապստամբ, անհնազանդ, գոռոզ սիրտ մը իր զօրութեամբը բռնի չի խոնարհեցնէր՝ անոր մէջ լեցուելու համար: Սուրբ Հոգին... Աստուած իրեն հնազանդ եղողներուն տուաւ» (Գ. Առաք. Ե. 32):

Սուրբ Հոգւոյն զօրութեան ներգործութիւնները շատ են հնազանդ հաւատացեալին սրտին եւ կեանքին մէջ: Տես քանի մը հատը հետեւեալ համարներուն մէջ.— Եփես. Ա. 17-19, Հռովմ. Ը. 9, 13-15, Բ. Տիմ. Ա. 7:

Բաղդ. Յովհ. ԺԶ. 14 եւ Գ. Առաք. Ա. 8, Սուրբ Հոգւոյն միջոցով Յիսուսի անունը զօրութիւն կը դառնայ:

Բաղդ. Գ. Առաք. Գ. 7, «Ի՞նչ զօրութիւնով կամ ի՞նչ անունով ըրիք դուք այս բանը», եւ Գ. Առաք. Գ. 12-17, «Ինչո՞ւ մեզի կը նայիք, որպէս թէ մենք մեր զօրութիւնովը... Անոր անունը հաւատքով՝ Անոր անունը հաստատեց ասիկա»:

ՅՈՒԼԻՍ 12.—

ՀԱԼԱԾԱՆՔԻ ՄԷՋ ՎԿԱՅԵԼ

Դաս Գ. Առաք. Գ. 5-12, Ա. Կոր. Ա. 21-25

Կարդալ Հռովմ. Ժ. 8-13

Վկայելու համար վկայ ըլլալ պէտք է: Վկան պէտք է կարող ըլլայ ըսել, «Գիտեմ», «Կը հաւատամ», «Ունիմ»: Գիտեմ որու եմ հաւատացեր, Գիտեմ թէ մահէն կեանքի փոխուած եմ: Գիտեմ թէ Նա իմ մեղքերս ներած է:

Վկան կը վկայէ ուրիշի մը համար եւ ոչ թէ ինքն իր անձին համար: Պետրոս եմիւս առաքեալները վկայեցին Յիսուս Քրիստոսի անունը, Ա-

նոր մահուան, յարութեան եւ Անոր անունովը փրկութեան (Գ. Առաք. Գ. 10-12): Վկայելու համար գերմարդկային Աստուածային զօրութիւն ունենալ պէտք է, վասնզի հաւատարիմ վկայութիւնը միշտ հալածանք յառաջ կը բերէ: Պետրոս «Հոգևով Սրբով լեցուած» վկայեց (Տ. 8):

Սերտէ եւ բաղդատէ մեր դասին իւրաքանչիւր համարին մէջ տարբեր տեսակ զօրութեան մը յայտնուիլը.—

Գործ. Գ. 5, Ամբոխավար զօրութիւն:

Տ. 6, Հեղինակութեան զօրութիւն:

Տ. 7, Դատարանական զօրութիւն:

Տ. 8, Սուրբ Հոգւոյն զօրութիւնը:

Տ. 9, Հրաշքի զօրութիւն:

Տ. 10, Յարութեան զօրութիւն:

Տ. 11, Աստուածային զօրութիւն:

Տ. 12, Փրկութեան զօրութիւն:

Աշխարհ յաճախ կուրօրէն կը յուսայ առաջին 3 տեսակ զօրութեանց: Իսկ եկեղեցիին զօրութիւնը պէտք է ըլլայ Տ. 8-12ի զօրութիւնը, որ աւա՛ղ, շատ պակասած է: Շատ մը եկեղեցիներու մէջ «անարիւնութեան» տկարութիւնը կայ. ինչ որ է արիւնը մարմինին համար, նոյնն է Բրիստոսի արիւնը եկեղեցիին համար: Սուրբ Հոգիին զօրութիւնը ամենէն հզօր կերպով ի յայտ կուգայ, երբ Բրիստոսի վկան պատրաստ կ'ըլլայ խաչեալ Փրկչին սիրոյն իր արիւնը թափել նահատակի սեղանին վրայ:

ՅՈՒԼԻՍ 19.—

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ԿԵՂԵՅԻՈՅՆ ՄԷՋ

Դաս Գ. Առաք. Գ. 32-35, Բ. Կոր. Ը. 1-9

Կարգալ Սաղ. ՃԺԲ. 5-10

Գ. Առաք. Գ. 32-35ը կարգալով եւ զայն մեր ներկայ եկեղեցիներուն հետ բաղդատելով, մարդու սիրտը կը լեցուի եւ երբեմնի մարգարէին նման կը փափաքի ըսել, «Ի՞նչ ժողովուրդիս աղջկանը բեկմանը համար աչքէս ջուրի հեղեղներ կ'իջնեն» (Ողբ. Գ. 48): Ո՛ւր է մէկ սիրտը եւ մէկ հոգին հաւատացեալներուն բաղմութեանը մէջ: Անմիաբանութեան եւ բաժանման ոգին կը տիրէ յաճախ ամենէն հոգեւոր ճանչցուած, Տէրոջը ընտրեալները, ներկայ դարուս եկեղեցիին Փրկողեզդիւնի կոչուելիք եկեղեցիներու մէջ:

Եւ ի՛նչ ըսել ստացուածքի, մերը եղած ամէն բաններուն որոնց փակած ենք եւ իբր մերը եւ միայն մերը կը սեպենք: Որքան պզտիկ բաներու համար որքան շուտ կը ջգայնոտինք, երբ ուրիշ մը մեր քահն ու բրիճը առած, կոթը կոտ-

րած վերադարձնէ, կամ տաշտ մը առնէ ու զայն սեւցած կամ ծակած վերադարձնէ, կամ մեր աթոռը առնէ ու քիչ մը խարխլած վերադարձնէ, եւ դեռ ինչե՛ր ու ինչե՛ր ամենօրեայ ընթացիկ գործնական կեանքի մէջ, պզտիկ բաներու վրայ, նոյնիսկ մեր աղքատութեան մէջ՝ մեր արծաթսիրութիւնը երևան կուգայ: Յիբաւի մենք հեռու ենք նմանելէ նաեւ մակեդոնացուց եկեղեցիներուն «որոնց ծանր աղքատութիւնը աւելի մեծ առատաձեռնութիւն եղաւ» (Բ. Կոր. Ը. 2), եւ հոն ինչպէ՞ս նաեւ հոս՝ աշխարհի անշահախնդիր, զոհող, ծառայող հաւատացեալներու բաղմութեան վրայ, «անոնց ամենուն վրայ» մեծ շնորհք կայ: Եւ զարմանալի չէ նաեւ որ «մեծ զօրութիւնով աւաքեալները վկայութիւն կուտային Տէր Յիսուսի յարութեանը»: Եւ մենք կ'ազաղակենք սրտիցաւով. «Ով Տէր, վրկէ, վասնզի սուրբ չմնաց» (Սաղ. ԺԲ. 1):

ՅՈՒԼԻՍ 26.—

ԲՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆԸ ՀԱՆՍԾԱՆՔՈՎ ՏԱՐԱԾՈՒՄ

Դաս Գ. Առաք. Է. 59-Ը. 4, Ա. Պետ. Գ. 12-19
Կարգալ Ա. Պետ. Ա. 3-9

Մեր դասին առաջին մասը կազմող Գ. Առաք. Է. 59-Ը. 4ի մէջ կը տեսնենք.— քարկոծումով ըստ պանութիւն... մեծ հալածում ամբողջ եկեղեցիին վրայ... ցիր ու ցան ըլլալ... մեծ ողբ... եկեղեցիին շատ փնաս... այրերու եւ կիներու քաշքոտում... բանտարկութիւն: Բայց ինչ հրաշալի է արդիւնքը, «եւ այն ցիրուցան եղածները կը պտըտէին ու խօսքը կը քարոզէին»: Յայտնի կ'երևի Գ. Առաք. ԻԲ. 20էն թէ Ստեփանոսի նահատակումը Սօղոսի յետազային դարձին մեծապէս նպաստեց: Դալով բանտարկութեանց՝ այս ալ միշտ «ա՛լ աւելի Աւետարանին յառաջդիմութեանը պատճառ կ'ըլլար» (Փիլ. Ա. 12, 13): Մէկը շատ ճշգործն ըսած է, «Նահատակաց արիւնը եկեղեցւոյ սերմն է»:

Ս. Գրքին մէջ հատուածներ կան որ հաւատացեալներն լաւ կ'ընենք զոց սորվելով. աղպիսի հատուած մըն է նաեւ Ա. Պետ. Գ. 12-19, «Սիրելիներ, օտար բան մի սեպէք այն նեղութեան բորբոքը որ... հապա ուրախ եղէք...»: Ասոր նմանող համար մըն է Փիլ. Ա. 29 ուր առաքեալը կ'ըսէ, «ոչ Թէ միայն Անոր հաւատալ»: Բրիստոսի հաւատալ Աստուծոյ տրուած շնորհք մըն է (Եփես. Բ. 8) եւ Անոր համար չարչարուիլ՝ շնորհքէ աւելի մեծ չափ մըն է որմէ շատ մը հաւա-

ԸՆՏԱՆԵԿԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱՅԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՄԷՉ

○○○○○

ԿՆՈՋ ԲԱԺԻՆԸ.—

(Եփես. Ե. 22-24, 33, Կոր. Գ. 18, Առակ. ԼԱ. 10-31)

Թերեւս կը խորհիք թէ էրկան դիրքին բաղդատմամբ կնոջ դիրքը ստորնադոյն է: Եւ ես կը ճանչնամ այլեր, որոնք շատ լաւ գիտեն առաքեալին յորդորը, «Կիներ, հնազանդ եղէք», եւ որ զայն կը գործածեն իրենց անձնասիրութիւնը արդարացեալու համար, իրենց քմահաճոյքին համաձայն:

Ընտանիքին մէջ ձեր ունեցած դիրքը փառաւոր է, եթէ դուք զայն կը հասկնաք ու կը կատարէք: Աստուծոյ սրտին համեմատ եղող կին մը լաւագոյն պարգեւն է որ Տէրը կրնայ տալ մարդուն: Նա երկրի վրայ անոր հրեշտակն է, անհամար շնորհքներու մատակարարը: Կնոջ ձայնը, անոր ժպիտը, անոր ներկայութիւնը ինչ ուրախութեան եւ զօրութեան աղբիւրներ են մեզի այրերուս:

Եթէ աղէկ չէր որ մարդը մինակ ըլլար Եղեմի մէջ, դրախտին մէջ, ալ աւելի աղէկ չէ որ ան մինակ ըլլայ հիմա այսքան չար աշխարհի մը մէջ: «Անոր էրկանը սիրտը անոր վրայ վստահ է» (Առակ. ԼԱ. 11):

Այրը, որուն զբաղումները միշտ զինք իր տունէն դուրս կը կանչեն, բարոյական ճշմարիտ ոյժ մը կը գտնէ իր կնոջ վրայ խորհելով: Գործը աւելի դիւրին կը թուի, օրուան ծանրութիւնը աւելի թեթեւ, երբ խորհուրդը (սիրտը խորհուր-

դով) կը սաւառնի դէպի տուն: Հոգեկան հաղորդակցութիւնը, վստահութիւնը թէ ուրիշ սիրտ մը իրենին հետ միասնաբար կը բաբախէ, կը գեղեցկացնէ, կը կենդանացնէ էրկան աշխատութիւնը: Օրուան յոգնութենէ ետք տուն վերադառնալու խորհուրդը այրերու համար ուրախութիւն մըն է կանանց ներկայութեան շնորհիւ: Այրը կը հրճուի կնոջ ձայնը լսելով եւ անոր ժպիտը տեսնելով: Այս խորհուրդը կը քաջալերէ եւ զայն չարէն կը պահէ: Քոյրերս, չէք դիտեր այն ամէնը ինչ որ կրնաք ըլլալ ձեր էրկանը համար: Աստուած ինչ լաւ ըրած է բաները ձեզ մեզի համար ստեղծելով:

Այս գեղեցիկ եւ բարձր կոչումը իրականացնելու համար պայմաններ կան: Արդեօք հարկաւոր է ըսել թէ կինը պէտք է իր էրկան հաւատարիմ ըլլայ: Իրարու հանդէպ եղած հաւատարմութիւնը ամուսնական կեանքի սիրոյն էական պահանջն է: Ճշմարիտ սէր մը միայն բացարձակ վստահութեան վրայ կրնայ հանդէս: Կասկածի շուք մը զայն պիտի ջնջէ: Ոչ այրը եւ ոչ կինը պէտք չէ թող տան (նոյնիսկ խորհուրդով) որ ուրիշ մը առնէ ընկերոջ տեղը՝ որուն հաւատարիմ մնալ խոստացուած է Աստուծոյ առջեւ: «Պոռնիկները ու շնացողները Աստուծոյ պիտի դատէ» (Եբր. ԺԳ. 4): Անոնք իր թագաւորութեան մէջ բնաւ բաժին պիտի չունենան:

Տիտ. Բ. 4, 5 ինչպէս նաեւ Առակ. ԼԱ. զլխուն մէջ կարդացած հատուածնիս կ'ըսեն թէ առաքիւնի կինը պէտք է տանտիկին ըլլայ, տնական գործերով զբաղի:

Աստուածաշունչին ըսածին համեմատ եղող կինը ամէն բանէ առաջ պէտք է իր առտնին կեանքովը զբաղի: Անիկա թագաւորութիւնն է ուր իր գործունէութիւնը, ճարտարութիւնը պիտի բանան երջանկութեան եւ ապրելու ուրախութեան աղբիւր (Առակ. ԼԱ. 10):

Մենք մարդիկս պէտք է ուրախանանք մեր տուներուն վրայ խորհելու ատեն. ուրախանաք հոն վերադառնալու խորհուրդով երբ անկէ հեռու կը գտնուիք: Եթէ տուն դառնալուն այրը զայն կը գտնէ միշտ անկանոն վիճակի մէջ, քիչ անգամ կերակուրները պատրաստ, կինը թափթփուռ վիճակով, իր սէրը պիտի պաղի: Կը ճանչնամ մարդիկ որ այս պատճառներով գինետան ճամբան ձեռք առին:

Թերեւս ըսէք, «Ինչ ընենք, գիտէք թէ մենք հրեշտակներ չենք»: Բայց մենք չենք կրնար անդոյ ըլլալ այս նիւթական մանրամասնութեանց: Հաւատացէք որ խնամով պատրաստուած

տացեալներ ինքզինքնին կը զրկեն «այն նեղութեան բորբոքը» օտար բան մը սեպելով եւ անկէ փախչելով: Եթէ կորստական ոսկին կրակով կը փորձուի, հապա չգարմանանք եթէ մեր հաւատքին փորձառութեան համար (Ա. Պետ. Ա. 7) «հնոցը վառելու սովորութենէն եօթնապատիկ աւելի վառեն» (Դան. Գ. 20):

«Մինչեւ ի մահ հաւատարիմ եղիր, ու քեզի կենաց պսակը պիտի տամ» (Յայտ. Բ. 10):

Հետեւողութեամբ

Վ. Ս.

կերակուրները, տանը կարգ կանոնությունը, իրենց ազդեցությունը ունին սիրող վրայ, սերը, որ տանը ուրախությունը եւ կեանքն է: Դիտեմ թէ զժուար ժամանակներու մէջ ենք, եւ ո՛ր առտոնին խնդիրները լուծել ղիւրին չէ: Քոյրերո՞ւ, ձեր կողմէն գործունէութեան եւ վարուելակերպի մեծ կորով մը պէտք է:

Դիտեմ թէ արդի ընկերական վիճակը յաճախ կ'ստիպէ կինը տունէն դուրս երթալ, ամուսնոյն օրավարձքին անբաւական ըլլալը կը պարտադրէ կինը ձգել տունը՝ իր աշխատութեամբ պակասը լրացնելու համար: Ասիկա միշտ ավստասալի պարագայ մըն է:

Կան նաեւ կիներ որ ծանրաբեռնուած են զաւակներու հոգով, որ ահագին ժամանակ կ'առնէ: Մենք ասանկ մայրերուն կը կարեկցինք: Սակայն կան անհոգ կիներ որոնք որքա՛ն ժամանակ կը կորսնցնեն զրացիներու հետ շաղակրատելով կամ անամէջ ընթերցմամբ: Ասոնց դէմ պայքարելու է: Անոնք ձեր երջանկութեան թըշնամիներն են: «Իր տանը ճամբաները կը քննէ» Առակ. ԼԱ. 27): Որքա՛ն շատեր կան որ իրենց ժամանակը կը կորսնցնեն ուրիշներուն տանը ճամբաները քննելով եւ զայն ուրիշներու պատմելով... եւ տունը ատոր փառը կը կրէ: Ուստի առաջին պարտականութիւն, տունը, կնոջ մտադրադման, հոգածութեան, գուրգուրանքին, աշխատութեան առարկան:

Այս չնշանակեր թէ իր սիրտը զոցուած պէտք է ըլլայ արտաքին ամէն անցուդարձի: Երբեմն այս անհաւասարակշռութիւնը կը գտնուի: Ճշմարիտ կնոջ մը սիրտը բաց կը մնայ ամէն վըշտացեալի (Առակ. ԼԱ. 20, 26): Դժբաղդը, անտունը չմոռնար: Տունը, որ դուք պիտի պահէք կարգապահութեան մէջ, տաք, հիւրընկալ, անոր ճառագայթումը իր սահմաններէն անդին պիտի անցնի: Քրիստոնեայ տուն մը պէտք է Բեղհեզդա մը ըլլայ — ողորմութեան տուն մը: Հոս չեմ կրնար ինքզինքս արգիլել սիրեցեալ մօրս յիշատակին մեծարանք ընծայելէ: Մենք 14 դասակէինք, հացերնիս օրը օրին էր որ կը շահուէր, ընտանիքին նիւթական վիճակը շատ սեղմ էր և մայրս իր բոլոր գործերով մէկտեղ տակաւին միշտ կը գտնէր թշուառներուն բարիք ընելու, մասնաւորապէս գինովներուն: Յաճախ, անոնց

փողոցէն անցնիլը տեսնելով (գիւղին մէջ ամէն ալ զանոնք կը ճանչնայինք) զանոնք կը կանչէր, անոնց աման մը ապուր կամ գաւաթ մը սուրճ կուտար եւ լըջօրէն անոնց հետ կը խօսէր:

Թերեւս պիտի ըսէք, բայց կնոջ հնազանդութեան մասին չխօսեցաք: Սակայն ան ուրիշ բան չէ, եթէ ոչ էրկան եւ կնոջ միջեւ եղած կատարեալ համաձայնութիւնը որ ինքնին կ'իրականանայ կատարելով իւրաքանչիւրը՝ որպէս այր եւ կին իր դերը Աստուծոյ սրտին համեմատ: Ասիկա օրէնքի հնազանդութիւնը չէ, որուն ծառայական վախը կ'ընկերանայ, այլ սիրող եւ սիրով հնազանդութիւնը: Այս հնազանդութիւնը՝ կնոջ կողմէ ընդունիլն է այն տեղը որ իրեն եղած է Աստուծոյ խօսքով, որ զինք ստեղծած է իրեն տալով շատ մը սքանչելի պարգեւներ:

Այն միութիւններուն մէջ ուր այրը եւ կինը իրենց որոշ տեղը կը լեցնեն, հնազանդութիւն պահանջելու հարցը չմնար, հոն ինքնաբերաբար կ'իրականանայ առանց բաղխումի, առանց վերաւորանքի, ուրախութեամբ: Մէկը ըսած է թէ եթէ այրերը գլուխն են, կիներն ալ վիզն են որ զայն կը դարձնէ, եւ այս պէշ բաղդատութիւն մը չէ: Միշտ գլուխն է որ կը հրամայէ, բայց որքա՛ն շուարումի մէջ պիտի ըլլար եթէ վիզը գոյութիւն չունենար: Թող այրը իրեն վերաբերեալ պատասխանատուութեանց յանձնառու ըլլայ եւ թող կինը իրեն վերաբերեալները կատարէ, ու ամէն բան կարգին պիտի ըլլայ:

Ո՞վ բաւական է այս բաներուն: Ճշմարիտ կին մը ըլլալու համար պէտք է քրիստոնեայ կին մը ըլլալ: Եւ որպէս քրիստոնեայ կին ապրելու համար պէտք է Քրիստոս բնակի սրտին մէջ: Պէտք է որ իր ներկայութիւնը ձեր ճառագայթման աղբիւրը, ձեր զժուարիութեանց օգնականը, ձեր մարտնչումներուն զաղտնի զոպանակը ըլլայ: Այո, մարդկային սէրէն աւելին պէտք է:

Պիտի ըլլան զժուարիին ճամբաներ, յուսալուութեան պարագաներ, ախրութիւններ, ուր Տէրը միայն կարող պիտի ըլլայ ձեզ յաղթող հանդիսացնել:

(Շար.)

Թարգ. Ի. Յ. ԱՅՐԱՆՈՒՄԵՆ

Սէնթ Էթիէն



ՊԱՏԱՆԵԱՅ

.....

ՄԵՅՐԻ ՃՕՆՍ ԵՒ ԻՐ

ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ



Մէյրի ճօնսի անունը լսած էք, պզտիկներ: Մամաներնուդ ըսէք, գունաւոր կողքով, մէջը պատկերներ ու գեղեցիկ գոցեր ալ ունեցող գիրք մը անոր պատմութիւնը կ'ընէ: Այս դիրքը Ֆրանսայի մէջ կը ծախուի երկու ֆրանքի: Ըսէ՛ որ եթէ զանիկա քեզի առնէ, մինչեւ ծայրը պիտի կարգաս: Եթէ այսպէս խոստանաս իրեն, անշուշտ քեզի պիտի գնէ զանիկա. վասնզի կը ճանչնամ մայրիկդ, որ իր «գաւակներուն» աղէկ ընծաներ տալ պիտէ» Ղուկ. ԺԱ. 43:

Հիմա ես այն գրքին մէջի քանի մը բաները քեզի ըսեմ, որպէսզի կարգացած ատենդ շատ աղէկ հասկնաս:

Մէյրի ճօնս, փոքրիկ աղջիկ մըն էր, անգլիացի աղքատ գիւղացիի մը գաւազ: Հապա՛, պէտք չէ զարմանաս որ, անգլիացւոց մէջ ալ գիւղացի եւ աղքատներ կան: Անգլիա եւ Ամերիկա երկիրքի մէջ չեն գտնուիր. ու թէեւ այն երկիրներուն մէջ դրամ շատ կայ, բայց աղքատ ու խեղճ ընտանիքներ ու մանուկներ ալ կան:

Մէյրի ճօնս, ասկէ հարիւր տարի առաջ կ'ապրէր, ատոր համար իր կեանքէն շատ բաներ զարմանքնիդ պիտի գայ: Հիմա դուք ութ, տասը տասներկու տարեկան երբ կ'ըլլաք, ոչ միայն կարգալ, հապա շատ բաներ սորված կ'ըլլաք դպրոցէն: Մէյրի ճօնս մինչեւ տասը տարեկանին՝ կարգալ չէր պիտեր, իրենց գիւղին մէջ դպրոց անգամ չկար: Իր հայրիկը տկար էր, տունէն դուրս չէր կրնար ելլել. իր գործը տունին մէջ կ'ընէր, եւ որովհետեւ միշտ հիւանդ էր, մայրիկը կ'օգնէր իրեն կտաւ գործերու մէջ. ուստի պզտիկ Մէյրիին կ'իյնար անական գործերը ընել: Խորհեցէք անգամ մը, ութ տարեկան զեռ չեղած՝ տուն ալլել, կերակուր եփել, կարկտուք ընել, հաւերուն նայիլ, բոլորը իր պարտականութիւններն էին: Բայց բան մը կար, որ մեր աչքին խեղճ երեցող այս տունին բնակիչները ուրախ ու երջանիկ կ'ընէր: Դուք գիտես ինչ բան, այո՛, ճիշդ այդ, Տէր Յիսուսով իրենց ունեցած մխիթարութիւնն ու խաղաղութիւնը, իրենց հոգեւոր կեանքը:

Սակայն, նայէ, անոնք Տէր Յիսուսը շատ կը

սիրէին, Անոր սուրբ պատուէրները կը կատարէին, բայց տուններին Սուրբ Գիրք մը չէր գտնուեր: Ինչ զարմանալի բան: Ինչո՞ւ, կարգալ չէին գիտէին: Այո, հայրիկն ալ, մայրիկն ալ կարգալ գիտէին. բայց Սուրբ Գիրքը այնչափ սուղ էր, որ միայն հարուստները կրնային գնել: Եւ դուն թերեւս գիտես որ հարուստները ընդհանրապէս Ս. Գիրքը չեն սիրեր: Չե՞ս հարցնիր թէ, քանի որ Սուրբ Գիրք չունէին, ինչպէ՞ս քրիստոնեայ էին անոնք: Այո՛, ատիկա զարմանալի է: Առանց Ս. Գրքին խօսքերը մեր կեանքին ընթացք տալու, առանց զանոնք գիտնալու եւ մեր միտքերը բերելու, մենք չենք կրնար ո՛չ կեանք ունենալ ո՛չ ալ քրիստոնեայ ըսուիլ: Դուն Ս. Գիրք կը կարգալ, կրնա՞ս քրիստոնեայ ըլլալ: Հիմա նայէ, Մէյրի եւ իր մայրիկը իրիկունները լապտերով մինչեւ ուրիշ գիւղ կ'երթային ժողովի, եւ կ'աճապարէին ժողովը սկսելէն առաջ հասնիլ, որպէսզի լսէին Ս. Գրքին խօսքերը, որ տա՛ն ատեն պաշտամունքին սկիզբը կը կարգացուէր: Այսչափ չէր ամէնը: Մէյրի ուշադրութեամբ մտաւիկ կ'ընէր որ գոց սորվէր ու զար կրկնէր իր հայրիկին որ ստիպուած էր տունը մնալ:


Բայց պզտիկ աղջիկը հարկաւ մէկ անգամ լսելով չէր կրնար իր մտքին մէջ առնել ամբողջ կարգացումը: Ու գաղափար մը ունեցաւ... Կարգալ սորվիլ: Երկու տարի աղօթեց որ Տէրը կերպ մը գործածէր որպէսզի ինք կրնար կարգալ սորվիլ: Առտուած պատասխանեց իրեն. բայց դիրին միջոց մը չէր որ տուաւ: Պէտք էր ամէն օր, առտու եւ երեկոյ երկար ճամբորդութիւն մը ընել մինչեւ ուրիշ գիւղ մը եւ իր տնական պարտականութիւնները դարձեալ պէտք էր ընել: Անիկա Սուրբ Գիրք կարգալու իտէալին հասնելու համար ծանրութիւն չէր սեպեր այս ամէնը: Առանկ նպատակի մը համար դպրոց գացող աղջիկ մը կրնաք աղէկ գիտնալ թէ ինչպէս յառաջադէմ էր:

Կարգալ սորվեցաւ: Բայց այդ բաւական չէր որ կրնար Ս. Գիրք կարգալ: Պէտք էր Ս. Գիրք մը ունենար: Իրենք շատ աղքատ էին եւ Սուրբ Գիրքն ալ շատ սուղ էր. բնաւ կարելի չէր որ իր հայրիկը գնէր այդ յանկազին առարկան: Բարի ազարակապան մը Շաբաթ օրերը Մէյրին տունը կ'ընդունէր որպէսզի իրենց Ս. Գիրքը սերտէ: Շատ տարիներ Մէյրի գնաց եկաւ Ս. Գիրք կարգալու համար: Անոր ջանքն էր Ս. Գիրքը իր մտքին մէջ կրել: Դանի կը սորվէր, այնքան կը քաղցրանար խօսքը: Ուստի որոշեց ունենալ անձնական Սուրբ Գիրք մը: Բայց այս որոշումը

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏԱՅ ԵՐԳԸ

ՅԻՍՈՒՍ ՔԵԶԻ ՊԻՏԻ ՀԵՏԵԻԻՄ

Թարգ. Ֆրնս. Յ. Ն. Ղ.



Յիսուս Քեզ հետեւիմ պիտի,
Կեանքս ըլլայ տրտմութեան՝
եւ Կամ Ուրախութեան.

Յիսուս Քեզ հետեւիմ պիտի:

Յիսուս Քեզ հետեւիմ «այսօր»,
Հոգիս է ազատուած,

Ըմպէ աղէկ կենաց.

Յիսուս Քեզ հետեւիմ «այսօր»:

Յիսուս Քեզ հետեւիմ եւ «վաղն»
Թէ զան փորձութիւնք խիստ

Ունիմ ներքին հանգիստ.

Յիսուս Քեզ հետեւիմ եւ «վաղն»:

Յիսուս Քեզ հետեւիմ «ընդ-

միշտ»:

Եթէ բարեխօսես,

Թէ Տէր ինձ դուն օգնես.

Պիտի Քեզ հետեւիմ «ընդ-

միշտ»:

Եթէ ուրիշներ գիտնային՝ Քալիտի զինքը ծաղրէին,
այնքան որ անհնարին բան մը պիտի սեպէին
իրեն: Անիկա կարգալ սորվելու միջոցի մը հա-
մար աղօթեց, բայց զիտացաւ թէ Ս. Գիրք մը ու-
նենալու համար պէտք էր աղօթել ու գործել:
Ուստի վեց տարի անընդհատ խնարդութիւն ը-
րաւ մինչեւ կրցաւ Ս. Գիրք մը գնելու դրամ
հաւաքել: Բայց ահա ղեկարարութեան նայէ: Մինչ
Ս. Գիրք մը գնելու դրամ հաւաքած ունէր, չկար
Ս. Գիրք մը որ գնէր... Տասնըվեց տարեկան ան-
փորձ աղջիկ մը, որ մ'ալ ստիպուեցաւ ճամբայ
իյնալ շատ հեռու քաղաք մը երթալու: Քաղեց,
քաղեց, առտուընէ մինչեւ իրիկուն: Բայց ի՛նչ
ցաւալի բան, հոն ալ Ս. Գիրք չէր մնացեր: Բայց
սիրելի Մէյրին երբ իր մեծ փափաքը կը յայտ-
նէ եւ իր պատմութիւնը կ'ընէ ու աղի աղի կու-
լայ, պաշտօնեան զինք չի կրնար մերժել եւ հոգ
Ս. Գիրք մը որ բարեկամի մը համար պահած

էր, կը հանէ կուտայ իրեն: Մէյրի ձօնաւ եւ իր
Ս. Գիրքը... ի՛նչ տեսարան: Բայց ասիկա երկ-
նային պահ մըն է, ո՛վ կրնայ նկարագրել: Այս
շատ յուզիչ պարագան փայլակ մը կ'աւթնցնէ
պաշտօնեային մաքին մէջ թէ պէտք է Ս. Գրք
Ընկերութիւն մը հիմնել եւ ամէն անգլիացի
զիւրութիւն տալ Սուրբ Գիրք ունենալու: Այս
խորհուրդը վերջը Տէրը աւելի պայծառացնելով
փոխանակ Անգլիոյ՝ ամբողջ աշխարհի համար այդ
ծրագիրը կ'իրականացնէ: Ահա այսպէս, այս
փոքրիկ աղջիկը, Մէյրի ձօնաւ, Աստուած կը գոր-
ծածէ կազմելու աշխարհի ամենէն մեծ բարեբը
Բրիտանական եւ Օտարագգի Սուրբ Գրքը ընկե-
րակցութիւնը:

Դուն գրադարան մը ունի՞ս: Այս 95 եւ մեծկալ
չլիւրով գիրքը քու գրադարանդ ալ թող գար-
դարէ, եւ քեզի թող յիշեցնէ քու Սուրբ Գիրքիդ
ի՛նչ թանկագին ըլլալը: Լ. Ս.


Մեանդր *P.* *F.*

Յի սուս քեզ հետեւիմ պիտի
Յի սուս քեզ հետեւիմ գիտի

P. *f.* *rit*

կեանքս և այս տրտմութեան և կամ ուրախութեան
Յի սուս քեզ հետեւիմ պիտի

ՋԱՅՆԱԳՐՈՒԹԻՒՆ “ՅԻՍՈՒՍ ԳԵՋԻ ՊԻՏԻ ՀԵՏԵԼԻՄ” ԵՐԳԻ



ՀԱՅ ԱԿԵՏ. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

(Շարաժամիցի աղօթածողովներու մասին հարցնել տեղոյն վրայ):

ՄԱՐՄԵՅԻ—Հովիւ՝ (Վեր.) Յ. Ն. Ղազարոսեան
7 Rue Papère.

8 30 կիր. դաս մեծերու 2 ր. Philippe de Giraid
15 30ին աղօթածողով, » »

Կիր. ժամը 13 45ին քարոզածողով, »
Մանկանց համար

Կիր. դասեր ժամը 9. 30ին քաղաքին մէջ
Սէնժակիէն եկեղեցւոյ աղօթատեղիին մէջ

Լէզ Օլիվ, Սէն ժէրոմ, Ս. Միքի, Ալ, Պուլ-
վար Օտո մասնաւոր բնակարաններու մէջ

Շարաժամիցի ժողովներ

Բ. շր. ժամը 2ին Սէնժ Անժուան,

Դ. շր. ժամը 2ին Սէն ժիւլիէն եւ Լէզ Օլիվ

Դ. շր. 19 30ին քաղաքը 11, Rue de l'Eclipse

Ե. շր. ժամը 20ին Սէն ժէրոմ

Ուր. ժամը 20ին Camp Victor Hugo

Սէն ԼՈՒ.—Քարոզիչ Պատ. Վահան Սահակեան
Chapelle Evang. Armen. Bd. Escalon, St. Loup

Կիր. ժամը 8 30ին մանկանց կիր. դաս:

10. 30ին Ս. գրական ուսումնա.

15 30 ին քարոզածողով:

Սէնժ ՄԱՐԿՐԻԹ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով:

ԼԱ ՍԻՕՅԱ.— Քարոզիչ՝ Պատ. Ս. Պազգալեան
24 Rue Fougasse

Կիր. ժամը 9. 30 ին աղօթածողով

Ֆրանս. եկեղեցիին մէջ

15 ին քարոզածողով,

Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը

.....

ԲՕՆՏ ՕՊԷՆԱՍ—Հովիւ՝ Վեր. Ա. Փափազեան
Pont-d'Aubenas, (Ardèche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս

10. 15 քարոզածողով

18. 30 աղօթածողով

ՍԷՆ ՓԻԼԻ.—

Կիր. ժամը 10ին մանկանց կիր. դպրոց:

16. 30 ին քարոզածողով եւ

աղօթածողով

ՄՕՆԹԷԼԻՄԱՐ.—

Կիր. ժամը 13ին մանկանց կիր. դպրոց

14ին քարոզ եւ աղօթածողով:

.....

ՎԱԼԱՆՍ.— Հովիւ Բրոֆ. Գ. Գ. Խայկեան
55 Ave. Jean Jaurès Bourg les Valence

(Drôme)

Կիր. ժամը 13ին քարոզածողով Ֆրանս

էկեղեցիին մէջ

ՌՕՄԱՆ.—

Կիր. քարոզածողով:

ԼԻՕՆ—Հովիւ՝ Վեր. Ժ. Պարսոմեան,

18, Rue du Dr. Rebatal

Կիր. ժամը 9. 45ին քարոզածողով,

5 Cours Lafayette, 8 Passage Coste.

11ին աղօթածողով նոյն տեղը:

15 ին երիտասարդութիւններու

ժողով (15 օրը անգամ մը):

18 Rue du Dr. Rebatal.

ՏԷՍԻՆ.—

Կիր. ժամը 13. 45ին քարոզածողով,

15ին աղօթածողով: Rue Wilson.

ՍԷՆ ՄՕՐԻՍ

Կիր. ժամը 10ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԻԷՆ.—

Կիր. ժամը 15ին քարոզածողով

Rue Lafayette.

ՓՕՆ ՏԸ ՇԷՐԻԻ.—

Կիր. քարոզածողով եւ աղօթածողով

(15 օրը անգամ մը):

ՍԷՆԹ ԷԹԻԷՆ—Քարոզիչ Պատ. Ի. Արքանմեան
60 Rue Richelandière

Կիր. ժամը 10. 30ին քարոզածողով

57 Rue de la République.

17ին աղօթածողով

Արմէ ախ Սալիւի սրահին մէջ

ՍԷՆ ՇԱՄՕՆ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով

Mairieի մէջ. Justice de la Paix սրահը

.....

ԲԱՐԻՋ—Հովիւ՝ Պատ. Զ. Բ. Պուտաքեան,
10 bis Villa de la Gare, Vanves (Seine)

Կիր. ժամը 10 30ին քարոզածողով

11 Rue Jean Bert Ա յարկ Met. Rennes

Ամսոյն Ա. կիրակին ժամը 16. ին Ե. Բ. Բ. Բա-
նալսոյն. Թին: Ամսոյն Գ. կիր. ժ. 16ին Ս. Բ. Բ.

37 Rue Tournesfort Paris 5 Metro Mouha

Կիր. ժամը 20. 30ին աղօթածողով

ժամը 10ին կիրակնօրեայ դաս

59 Ave. du Bas Meudon Ile St Germain

Issy les Moulineaux

ԱԼՖՕՐՎԻԼ.— Քարոզիչ՝ Պր. Մ. Վէրիւեան
22ter Rue de Vitry Alfortville

Կիր. ժամը 9ին կիր. դպրոց

Կիր. ժամը 10ին սպաշտամունք

Երկու կիր. անգամ մը 7.30ին երիտ. խառն ժողով

Rue des Brochets, Alfortville



“Բանբեր”ի ներկայ թիւին վերջին էջին մէջ մեր ձայնագրութեան
“Քլիշէ”ն գրաշարական վրէպով շրջած տպագրուած ըլլալով. կը
խնդրուի հակառակ կողմէն կարդալ:

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒ ՍԻՒՆԱԿ

Նոր ժողովասարահի մը նուիրումը Մարտի 11 մէջ:
Անցեալ կիրակի (21 Յունիս) ուրախութիւնը վայելեցինք նոր սրահի մը նուիրման հանդէսը կատարելու Սէն Լուիի մէջ:

«Բանբեր»ի ընթերցողներուն յայտնի է որ քաղաքիս մէջ 30 000ի մօտ հայութիւն մը կայ, դժբաղդաբար քաղաքիս ամէն անկիւններուն եւ արուածաններուն մէջ ցրուած են: Ոմանք բոլորովին անտարբեր եւ անհաւատ դարձած են, ուրիշներ հոգեւորապէս բոլորովին ջլատուած եւ յուսահատ վիճակի մէջ կը գտնուին: Հոգեւոր կեանքի այս քայքայումը մեզի համար շատ մեծ ցաւ մը եղած է սկիզբէն ի վեր:

«Ս. Լուի»ի կողմերը քանի մը տարիներէ ի վեր հետզհետէ հաստատուեցան բազմաթիւ հայեր, այնպէս որ այդ շրջանի հայոց թիւը մինչեւ 5000ի կը հասնի: Չորս տարիներէ ի վեր պարբերաբար ժողովներ եղած են հոն մեր Աւետարանիչ գրածախ կիւլշան եղբօր ձեռքով, որմէ հետէ այդ կողմերը սրահ մը ունենալու հարցը լուրջ աղօթքի խնդիր դարձաւ մեզի համար, ինչ որ ահա իրականացած է:

Անցեալ տարիէ ի վեր փորձ եղաւ այդ կողմերը գտնուած պատիկներն ալ շահագրգռել, այս ջանքը յաջողութեամբ պսակուած է, այնպէս որ 50է աւելի կիր. դպրոցի աշակերտութիւն մը ամէն կիրակի կը հաւաքուին Աստուծոյ խօսքին շուրջը հոն:

Մանկանց գործը ստանձնած է մեր եղբայրներէն «Բանբեր»ի ընտանիքին ծանօթ Աւետարանիչ Ս. Պազգալեան:

Կիրակի օրը խուռն բազմութիւն մը ներկայ էր ժամանակէն առաջ տեղ գտնելու նոր սրահին նոր նստարաններուն վրայ: Ներկայ էին Ս. Լուէն, քաղաքէն եւ Ս. Լուիի շրջանակներէն:

Բեմին վրայ նստած էին Հովիւը, երեք Աւետարանիչներ եւ Մարտի 11ի եկեղեցիին Հոգաբարձական մարմինը:

Օրուան յարմար պատգամներ տրուեցան հայերէն եւ թուրքերէն լիզուներով եւ տեղւոյն մանկանց կողմէ գեղեցիկ երգեր երգուեցան: Այս օրհնաբեր ժողովը տեւեց երկու ժամ:

Մեր աղօթքն է որ Տէրը այդ պատիկ սրահին մէջ, որ 80-100 հոգիներ տեղ կրնան գտնել, Հայ

մանուկներ կրթութիւն Տէրոջը Հոգիովը եւ հոգիներ փրկուին: Տէրը փառաւորուի:

«Բանբեր»ի ընթերցողներուն աղօթքը կը խնդրենք ուստի Ս. Լուիի համար:

«Բանբեր»ի օրացոյցը. —

Հայ ընտանիքի օրացոյցը 1937ի համար, արդէն պատրաստուելու վրայ է եւ Յուլիսի վախճանին կրնայ զրկուիլ բոլոր ուզողներուն: Ուստի անոնք որ մեծաքանակ կ'ապուպրեն եւ ժամանակին ունենալ կ'ուզեն, թող բարեհաճին կանխաւ մեզի իմացնել: Այս տարի ալ միայն անցեալ տարուան թուով պիտի հրատարակենք, այնպէս որ չենք կրնար երաշխաւորել որ վերջին վայրկեանին ապուպրողները գոհացում պիտի կրնան գտնել: Այս տարուան օրացոյցներէն շատեր ապուպրեցին քիչ մը ուշ, բայց Հիւրացան ընդունիլ, քանզի արդէն շատոնց սպառած էր: Ուստի կանուխէն կը ծանուցանենք որպէսզի մեր բոլոր աշխատակիցներն ու ընթերցողները ժամանակին գրեն մեզի որ մենք ալ իրենց համար ժամանակին հասցնենք: Աղօթած ենք եւ կ'աղօթենք որ այս պատիկ աշխատութիւնն ալ Տէրոջը փառքին եւ հոգիներու փրկութեան ծառայէ:

Ստալյանք ԽՕՄՆԱԿ (Ս. հատոր)

Հեղինակ Բրօֆ. Յ. Ս. Ֆէրմանեան

Արժէքաւոր գիրք մըն է, որ եկած է ներկայ ժամանակուան Հայ գրականութեան մէջ պարագ մը լեցնելու: Այս հատորին բովանդակութիւնը երեք մեծ զուխներու կը բաժնուի. ա. Պատմը. Լաճքներ, բ. Քերթուածքներ, գ. Ամփոփման Պակիր: Հեղինակը, Բրօֆ. Ֆէրմանեան (Խօսնակ) մեռաւ գրեթէ երկու տարի առաջ: Անոր ազնիւ տիկինը գեղեցիկ գաղափարն ունեցած է Խօսնակի գրութիւնները, որոնք տարիներու ընթացքին լոյս տեսած են հայ պարբերականներու եւ թերթերու մէջ, ի մի հաւաքել քանի մը հատորներու մէջ ամփոփուած, մատուցանելու ազգին:

Տիկինը ասկէ աւելի գեղեցիկ յուշարձան մը չէր կրնար շինել տալ իր ամուսնոյն:

Դիրքը կը բաղկանայ 304 մեծադիր էջերէ: Դինը շատ մատչելի է 15 ֆր. (փօստով):

Դիմել A. Der Hagopian, 17 Rue Damesme Paris

Rédaction du "PANPÈRE"
7, Rue Papère - MARSEILLE (France)

Imp. Y. ARMEN & Cie
39, Rue St.-Savournin - MARSEILLE